

ԳԻՄՆԱԿԱՆԱԿ

ԲԵՐԻՈՅ ԸՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՈՍՏՆՈՐԱՐԱՆԻ ՊԱՇՏՆԱԹԵՐԹ (ԻԹ. ՏԱՐԻ)
 Դեկտեմբեր Ա. 2019
 نشرة مطرانية الأرمن الأرثوذكس

ՄԱԿ-Ը ՃԱՅՆԵՐՈՒ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԵԱՄԲ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՅ ԻՍՐԱՅԷԼԻ ԿՈԼԱՆԵՆ ԴՈՒՐՍ ՓԱԼՈՒ ԴԱՅԱՆԶԸ

Չորեքշաբթի, 4 Դեկտեմբեր 2019-ին, ՄԱԿ-ը ձայներու մեծամասնութեամբ վերահաստատեց Իսրայելի սուրիական Կոլանի ողջ տարածքն դուրս գալու եւ ՄԱԿ-ի 4 Յուլիս 1967-ին ճշդած սահմանային գիծ վերադառնալու իր պահանջը:



Կազմակերպութեան անդամները խստիւ դատապարտեցին Իսրայելի կողմէ Կոլանի բռնագրաւումը, շեշտելով, որ միջազգային օրէնքին եւ ՄԱԿ-ի սկզբունքներուն համաձայն, ոչ մէկ երկիր իրաւունք ունի բռնի ուժով այլ երկրի մը տարածքը գրաւելու:

ՄԱԿ-ի մօտ Սուրիոյ փոխներկայացուցիչ Այման Ֆելլուի հաստատեց Սուրիոյ գերիշխանութեան իրաւունքը սուրիական Կոլանի 4 Յուլիս 1967-ին ճշդուած տարածքին վրայ, իրաւունք մը, որ սակարկութեան ենթակայ չէ:

ԱԶԳ. ԶԱՐԷՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄԸ ՏԱՐԱԼՈՒԹԱՐԱՆՆԵՐՈՒ ԲԱՅՈՒՄ

Երկուշաբթի, 4 Դեկտեմբեր 2019-ի առաւօտեան ժամը 9:30-ին, Ազգ. Զարեն Եփփէ Ճեմարանի տարրալուծարաններուն պաշտօնական բացման արարողութիւնը տեղի ունեցաւ:



Բացման արարողութիւնը հովանաւորեց Բերիոյ Յայրոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան:

Սրբազան հայրը դիմաւորուեցաւ Ճեմարանի հետամակալութեան եւ Տնօրէնութեան կողմէ: Բացման հանդիսութեան ներկայ էին նաեւ Զարիթաս Բոլանտ Յաստատութեան, Սուրիահայ Օգնութեան Խաչի Շրջ. Վարչութեան ներկայացուցիչները, Ճեմարանի Շրջ. Միութեան Վարչութիւնն ու բարերար անդամները, ինչպէս նաեւ Ճեմարանի նախկին տնօրէն Վահէ Ղազարեան:



Բացման ժապաւենին հատումէն ետք, ներկաները Ճեմարանի տնօրէն Յակոբ Քիլեճեանին եւ հետամակալութեան աստեալպետ Տիգրան Պետրոսեանին առաջնորդութեամբ ուղղուեցան Յամակարգիչներու սրահ, ուր տնօրէնը բացատրութիւն տուաւ համակարգիչի պահերուն մասին:

Ապա ներկաները ուղղուեցան քիմիագիտութեան տարրալուծարան,



որ Յալեպի հազուագիտ տարրալուծարաններէն մէկը կը համարուի:

Այնուհետեւ՝ բնագիտութեան տարրալուծարան, որ նորոգուած ու կահաւորուած էր Զարիթաս Բոլանտ Յաստատութեան կողմէ:

Շար. 12 II ➔

Հովանաւորութեամբ
Գերաշնորհ Տ. Մասիս Ա. Եպս. Չօպուեան
Առաջնորդ Բերիոյ Հայոց Թեմի
Կազմակերպութեամբ
Ս.Օ. ԽԱԶԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՅՈՐԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
Նուիրում
Ս.Օ. ԽԱԶԻ 100 ԱՄԵԱԿԻՆ
Երեքշաբթի, 10 Դեկտեմբեր 2019-ի երեկոյեան ժամը 5:00-ին,
«Գերգ Եսայեան» սրահէն ներս, Մուլէյնահիէ - Նալեպ:

Հ.Ե.Ս.
ՍՈՍԿԱՍՏՈՒԹԻՒՆ
129
Ամենակ 1890 2019
ԺՈՂՈՎՐԴԱՆՈՒԷՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ
ՄՇՏԱՆՈՐՈԳ ՈՒՆՏՈՎ
Կիրակի, 8 Դեկտեմբեր 2019-ի երեկոյեան ժամը 8:00ին,
«Գ. Եսայեան» սրահէն ներս, Մուլէյնահիէ - Նալեպ:

Խմբագրական

ԱՆԼՈՒԾԵԼԻ՞ ՉԱՐՅԵՐ ԵՆ

Հայկական մեր իրականության մեջ յաճախ կը քննարկուին հարցեր, կ'ըլլան ախտաճանաչումներ, կ'առաջարկուին լուծումներ, սակայն այդ լուծումները կամ կ'անտեսուին, կամ կ'ուշանան, կամ ալ փապուղի կը մտնեն՝ կրկնուելով, բայց խուլ ձեռքով և նեղ-անձնական շահերուն հետ բախելով յաճախ:

Սփիռքահայ թե հայրենի հասարակական կեանքի մեջ կը տրուած ճամբան պետք է մեզի սորվեցուցած ըլլար աւելին պահանջել մենք մեզմէ: Եթէ մեր օգտակարութիւնը պիտի ըլլար միմիայն այժմեան կացութիւնները քննարկելն ու առանց վճռականութիւն ցուցաբերելու հարցերը անլոյծ ձգելը, նախընտրելի էր, որ մենք մեզ չյոգնեցնէինք անպտուղ ախտաճանաչումներու ժամավաճառութեամբ:

Անլուծելի հարցեր գոյութիւն չունին, լուծումներու տարբերակները միշտ ալ կը հնչեն տարբեր կողմերէ, տարբեր չափանիշներով, սակայն ապարդիւն կը մնան երբեմն, երբ պաշտօնի վրայ կամ իշխանութեան մեջ գտնուող անձի չեն տազնապիր, իրավիճակներու բարեփոխման համար յանդուգն քայլերու չեն դիմեր եւ երբեմն իրենց նեղ շահերը արգելք կը հանդիսանան պարզ ու յստակ լուծումներու ձեռնարկելու: Ոմանք երբեմն կը սկսին լուծման տարբերակներու անպատեհութիւնները հաշուել ու այնքան բազմացնել, որ ապարդիւն համարուի այդ լուծումն ու հարցը մնայ հարց, օրակարգ, կրկնուող անլուծելի տագնապ:

Հարցը հարց պահելն է այսպիսիներուն գոյութեան երաշխիքը, լուծումները բոլորին պետք է յարմարի՞ն, որպէսզի լուծում համարուին, թէ հանրութեան շահերուն ծառայելու իրենց որակով պետք է գնահատուին, պիտի հարցուի իրաւացիօրէն:

Օրինակներով խօսինք.-

Հայերէնագիտութեան նահանջին մասին կը խօսինք յաճախ, բայց այնքան բա՞րդ աշխատանք է մարդու՞ պատրաստելը, ծրագիր մշակելը, լեզուն, գրականութիւնն ու մամուլը սիրցնելը, գրական, մշակութային թէ գիտական ոլորտներու մեջ հայերէնով ստեղծագործողները քաջալերելը:

Մշակոյթի աղաւաղման մասին կը խօսինք, բայց չունի՞նք մասնագետներ, նոյնիսկ երիտասարդ ուժեր, որոնց հոգատարութիւն ցուցաբերելով, գործի անկաշկանդ դաշտ ու պիտո՞ճէ յատկացնելով կը յաջողինք պահպանել մերը՝ ազգայինը, ու քայլ պահել աշխարհի երեսին տեղի ունեցող բարեշրջումներուն հետ:

Ըստ երեւոյթի գոյութիւն ունի այլ տագնապ մը, անձնական կամ հատուածական շահերէ վեր բարձրացող ու հանրային շահը հետապնդող պատասխանատուներու չգոյութեան տագնապ:

Այս տագնապն է գլխաւոր հարցը, որ կը դանդաղեցնէ հաւաքականութեան մը, ազգի մը յառաջընթացը, եւ ոչ թէ հարցերը անլուծելի համարելու յանկերգը:

Նոյն երեւոյթին կը հանդիպինք այս օրերուն հայրենիքի մեջ:

Ընդամենը բուհերուն մեջ հայոց լեզուի եւ պատմութեան դասաւանդումը պարտադիր դարձնել-չդարձնելու հարցը դժուար էր քննարկել հոյլ մը տագնապող երիտասարդներու հետ ու երկխօսութեան ճամբով լուծումներ որոնելը: Որքա՞ն սիրաշահած պիտի ըլլար նախարարը երիտասարդ տարրը, եթէ յարգեր ու ականջ տար անոնց ըսելիքներուն, երկխօսութեան դրական մթնոլորտ մը ստեղծելով օրինակ ծառայել բոլորին:

Դիւրաւ պիտի իրականանար այլազան ոլորտներու մեջ բարեփոխումներ մուծելու, նոր գործելաճ կիրարկելու իշխանութիւններու մարտավարութիւնը, եթէ մեր քաղաքական մշակոյթին մեջ կառուցողական երկխօսութեան դրական մթնոլորտ ստեղծուէր, փոխանակ ամէն քայլափոխի ցեխարձակումներով, վարկաբեկումներով եւ չիկ-չակներով հարցերը շրջանցելու:

Մեր ժողովուրդը հատուածական նեղ հաշիւներէ վեր պահելու, անոր յառաջընթացը ապահովելու համար երբեմն պարզապէս երկխօսութեան տրամաբանութեամբ առաջնորդուելու են դեկավար դէմքեր, ըստայնմ միայն կարելի է հարցերը լուծման առաջնորդել:

«Գ.»

-Երկուշաբթի, 2 Դեկտեմբեր 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Հին Հալէպի Մաստի թաղամասին մէջ ապօրինի կերպով կառուցուած 5 յարկանի շէնք մը փուլ եկած է, որուն հետեւանքով արձանագրուեցան 5 գոհեր եւ բազմաթիւ վիրաւորներ:



ՍԱՆԱ-ի թղթակիցը յայտնեց, որ շէնքը փուլ եկած է, որով հետեւ կառուցուած է ապօրինի կերպով, գիւղատնտեսական հողի վրայ: Ան աւելցուց, որ շտապ օգնութեան հրշէջները անմիջապէս ուղղուած են յիշեալ թաղամաս, փլատակներուն տակ մնացած դիակները դուրս բերելու համար:

-Երկուշաբթի, 2 Դեկտեմբեր 2019-ին, Սուրիոյ նախագահ Պաշար ալ Ասատ ընդունեց Սուրիոյ մէջ Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութինի անձնական բանագնաց Ալէքսանտր Լաւենթեւը եւ իրեն ընկերակցող պատուիրակուիները:



Հանդիպումին ընթացքին, կողմերը խորհրդակցեցան Սուրիոյ եւ յատկապէս Իտլիպի իրավիճակին եւ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն իրարայաջորդ յարձակումներուն շուրջ: Անոնք շեշտեցին ռուս-սուրիական կեցուածքը՝ ահաբեկչութեան դէմ պայքարելու գծով, ինչպէս նաեւ քաղաքացիները իբրեւ մարդկային վահաններ օգտագործելու ահաբեկիչներուն բռնարարները:

Կողմերը լուսարձակի տակ առին նաեւ Սուրիոյ հիւսիսարեւելեան շրջանի իրավիճակը եւ շեշտեցին, որ այս շրջաններուն ապահովութիւնը եւ խաղաղութիւնը կրնայ հաստատուիլ միայն այն ատեն, երբ Սուրիան իր վերահսկողութեան տակ կ'առնէ բռնագրաւուած հողերը, քաղաքներն ու հաստատութիւնները:

Աւարտին, կողմերը անդրադարձան քաղաքական գարգացումներուն եւ Ասթանայի յառաջիկայ խիստին նախապատրաստական աշխատանքներուն: Անոնք անհրաժեշտ համարեցին Սուրիոյ եւ Ռուսիոյ միջեւ երկխօսութեան եւ աշխատանքներու համակարգումի շարունակականութիւնը՝ արտաքին միջամտութիւնները կանխելու եւ Սուրիոյ ինքնիշխանութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը պահպանելու համար:

-Երկուշաբթի, 2 Դեկտեմբեր 2019-ին, տեղական աղբիւրներ հաղորդեցին, որ թրքական ուժերուն պատկանող զինեալ ահաբեկչական խմբաւորումներ բազմաթիւ հրթիռներ արձակած են Թալ Ռաֆաթի ուղղութեամբ, որուն հետեւանքով արձանագրուած են 9 գոհեր եւ աւելի քան 10 վիրաւորներ, ինչպէս նաեւ նիւթական բազմաթիւ վնասներ:



Աղբիւրը աւելցուց, որ հրթիռակոծումը տեղի ունեցած է աշակերտներուն դպրոցէն արձակուած պահուն:

-Երեքշաբթի, 3 Դեկտեմբեր 2019-ին, Հասիչէի մէջ ՍԱՆԱ-ի թղթակիցը հաղորդեց, որ թրքական բանակին ենթակայ զինեալ ահաբեկչական խմբաւորումներ իրենց թշնամական ընթացքը կը շարունակեն հիւսիսարեւմտեան Հասիչէի բնակիչներուն նկատմամբ: Անոնք Հասիչէի Ռաս ուլ Այնի Զաթուլ գիւղէն երիտասարդներ կ'առեւանգեն եւ գիւղի լքուած բնակարանները կը թալանեն:



-Երեքշաբթի, 3 Դեկտեմբեր 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ զինեալ ահաբեկչական խմբաւորումներ հրթիռակոծեցին Հալէպի հարաւային Ուլտիի գիւղը: Արձանագրուեցան 1 գոհ, վիրաւորներ եւ նիւթական վնասներ:



Յիշենք, որ Հալէպի արեւմտեան եւ հարաւարեւմտեան գիւղերուն մէջ կայք հաստատած զինեալ ահաբեկչական խմբաւորումներ յաճախ կը հրթիռակոծեն խաղաղ բնակչութիւնը, որուն հետեւանքով բազմաթիւ գոհեր կ'արձանագրուին:

ԹԻՔԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ԿՐԵՀԵՄԸ ԴԻԴԱԾ ԵՆ ԱՐԳԵԼԱՓԱԿԵԼՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԲԱՆԱԶԵԻԸ



Յարութ Սասունեան

13 Նոյեմբեր 2019-ին ծերակուտական Լինգի Կրեհեմի կողմէ (հանրապետական, Հարաւային Զարոյայնա) Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի վերաբերեալ Ծերակոյտի քուէարկութեան արգելափակումը մտորումներու տեղի տուաւ, թէ ինչ բան դրոյած է գայն՝ այդպէս վարուելու: Պատճառները կը տատանէին՝ սկսած Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի հետ Սպիտակ Տան մէջ իր հանդիպումէն՝ անոր քուէարկութենէն անմիջապէս առաջ, մինչեւ անոր կտրուկ շրջադարձերը քանի մը այլ հարցերու շուրջ եւ նախագահ Թրամփի թրքամետ քաղաքականութեան ենթարկուիլը:

Հայոց Ցեղասպանութեան բանաձեւին դէմ ծերակուտական Կրեհեմի քուէարկութիւնը բացատրելու եւս մէկ ծանրակշիռ պատճառ են այն գումարները, զորս են ստացած էր թուրք ամերիկացիներէ՝ իր քաղաքական քարոզարշաւներուն համար:

Եան ճ. Լինչ յօդուած գրած է Ahwalnews.com կայքին մէջ՝ փաստագրելով թրքական նուիրատուութիւնները ծերակուտական Կրեհեմի քարոզարշաւներուն: Այս գումարները կ'աւելնան այն միլիոնաւոր տոլարներուն վրայ, զորս Թուրքիոյ կառավարութիւնը կը վճարէ Ուաշինկթընի մէջ գործող լոպիիստական ընկերութիւններուն, որպէսզի Զոնկրէսի մէջ խոչընդոտեն Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի ընդունումը: 11 Յոկտեմբեր 2019-ին Akin Gump Strauss Hauer & Feld ընկերութիւնը աւելցուցաւ Թուրքիոյ համար լոպիիստական գործունէութիւն ծաւալող ամերիկեան ընկերութիւններու երկար ցանկին: Հետաքրքրական է, որ այս լոպիիստական ընկերութիւնը վարձած է TransAtlantic Petroleum թեքսասեան ընկերութիւնը, որ շահեր ունի Թուրքիոյ նախագահին ուղորտին մէջ: Akin Gump լոպիիստ կ'ընէ՝ Թուրքիոյ դէմ պատժամիջոցներու կիրարկումը խափանելու համար, բանաձեւ մը, զոր Ներկայացուցիչներու Պալատը մեծամասնութեամբ ընդունեց 29 Յոկտեմբեր 2019-ին:

Լինչ հարդորած է, որ Հայաստանի կառավարութիւնը Միացեալ Նահանգներու մէջ գումարներ չէ ծախսած լոպիիստի գծով, իսկ Ուաշինկթընի մէջ գործող ամերիկահայ կազմակերպութիւնները լոպիիստի համար շատ քիչ գումար ծախսած են՝ թրքական կառավարութեան ծախսած միլիոնաւոր տոլարներու համեմատութեամբ: «Ըստ ԱՄՆ հարկային վարչութեան (IRS) վերջին տուեալներուն՝ Ամերիկայի Հայկական Համագումարը (ԱՀՀ) 2017-ին հաւաքած է մօտաւորապէս 2 միլիոն տոլար, սակայն իբրեւ 501 (գ) (3) ոչ առեւտրական խումբ, անոր չէ թոյլատրուած ծախսել իր պիւտճէին

զգալի մասը լոպիիստի համար: Համաձայն Լոպիիստի բացայայտման օրէնքով (LDA) պահանջուող տեղեկատուութեան՝ ԱՀՀ, 2018-ին, լոպիիստական գործունէութեան համար ծախսած է 95 հազար տոլար, իսկ մինչեւ այսօր՝ 2019, ծախսած է 80 հազար տոլար: Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբը արձանագրուած է իբրեւ 501 (գ) (4) ոչ առեւտրական կազմակերպութիւն, ինչ որ կը նշանակէ, թէ յանձնախումբը կրնայ իր պիւտճէին մեծ մասը ծախսել լոպիիստի համար: 2017-ին, Հայ Դատի յանձնախումբի ընդհանուր եկամուտը կազմած է 850 հազար տոլար, սակայն կազմակերպութիւնը լոպիիստի համար վերջին երկու տարիներուն ընթացքին, ամէն տարի ծախսած է միայն 120 հազար տոլար՝ համաձայն LDAի բացայայտումներու:»

29 Յոկտեմբեր 2019-ին ԱՄՆ Զոնկրէսի Ներկայացուցիչներու Պալատի կողմէ Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի ընդունումէն ետք, Թուրք-ամերիկեան Ազգային Դեկլարատիոն (TASC) գործի անցաւ՝ կասեցնելու համար Ներկայացուցիչներու Պալատի նմանօրինակ բանաձեւի ընդունումը Ծերակոյտի մէջ:

Ըստ Լինչի՝ «TASCի ղեկավարութիւնը եւ անոնց գործընկերները անմիջական կապեր ունին Էրտողանի ներքին շրջանակներուն հետ եւ Կրեհեմի անհատական քաղաքական նուիրատուութիւններ կատարելու սովորութիւն: ... TASC-ի համանախագահ, դոկտոր Հալիլ Մուրթու Էրտողանի գարմիկն է: Ան եւ իր կինը 8 Օգոստոս 2016-ին ընդհանուր առմամբ 10 հազար 800 տոլար նուիրած են Team Graham Inc.ին, 2020-ին Ծերակոյտին մէջ իբրեւ ծերակուտական վերընտրման քարոզարշաւին համար: Անոնց անհատական նուիրատուութիւնները՝ 5400 տոլար իւրաքանչիւրը, առաւելագոյն է, որ անհատը Միացեալ Նահանգներու մէջ կրնայ տալ քաղաքական քարոզարշաւին, ամէն ընտրական փուլի: Մուրթուի գործատուն՝ Մասաչուսեց քաղաքը գրտնող Պէյսթէյթ բժշկական կեդրոնը Team Grahamի նուիրատուութիւններու ամէնէն մեծ աղբիւրներէն մէկն է: Ընթացիկ ընտրական փուլի մէջ հիւանդանոցի աշխատակիցները նուիրաբերած են 21 հազար 600 տոլար, 2020 թուականի ծերակուտականի համար քարոզարշաւին:»

Թուրքիոյ հետ կապուած եւս մէկ ընկերութեան՝ Nimeks Organicsի աշխատակիցները շարքին են ծերակուտական Կրեհեմի քարոզարշաւի գլխաւոր նուիրատուներուն: անոնք այս ընտրական փուլին տրամադրած են ընդհանուր առմամբ 16 հազար 200 տոլար անհատական նուիրատուութիւններ: «Nimeks Բնական

ՈՒԹ ՀԱՐԻՐ ԸՆԴԴԵՄ ՈՒԹՍՈՒՆԻ...

Կարօ Արմէնեան

Ի հարկ է տխուր է, երբ հայրենի ոստիկանութիւնը հրապարակ կը բերուի ութսուն երկսեռ երիտասարդ ցուցարարներու խաղաղ ցոյցը խափանելու: Հրապարակ կը բերուի ներկայ իշխանութեան որոշումով... Մտածեցէք պահ մը, թէ ինչպիսի՜ անհեթեթութեան դէմ յանդիման կը գտնուի այսօր հայոց ազգը աշխարհով մէկ: Բնական պայմաններու մէջ այս ոստիկանները խաղաղապահի իրենց առաքելութեամբ պիտի պաշտպան հանդիսանային իրենց քաղաքացիական իրաւունքներուն համար պայքարող այս հրաշք պատանիներուն: Չէ՞ որ Նորին Վսեմութիւն Պր. Վարչապետն էր, որ շաբաթ մը առաջ Ազգային Ժողովի ամպիոնէն ի լուր աշխարհին կը հռչակէր գերագնացութիւնը մարդկային իրաւանց իրաւակարգին...



Ես կը յիշեմ Ելեկտրական սակագներուն դէմ բողոքող Բաղրամեան Պողոտայի հսկայ ցոյցը նախորդ իշխանութեան օրով: Ցուցարարները գրաւած էին քաղաքային աղբամանները եւ պատնէշ կառուցած: Բաղրամեան Պողոտան դադարած էր ծառայել քաղաքային շրջանառութեան: Իսկ ոստիկանութիւնը կանգնած էր եւ համբերութեամբ կը լսէր ցուցարարներու բողոքը: Ոչ մէկ ատեն իշխանութիւնը դիմեց բիրտ ուժի: Ձեր բոլորին կողմէ մերժուած իշխանութիւնը գիտցաւ այնուամենայնիւ արժանավայելօրէն յարգել քաղաքացիի մարդկային իրաւունքները եւ հաղորդակցիլ ցուցարարներուն հետ:

Կը վերադառնանք նոյն խնդրին: Փակ համակարգի մէջ գործող իշխանութիւնը, հակառակ իր հռետորաբանութեան, այսօր կը դիմէ բիրտ ուժի ատով իսկ ծանուցելով իր ցաւալի սնանկութիւնը երիտասարդներու քաղաքացիական անհնազանդութեան դիմաց: Եւ, ի դէպ, բացայայտելով դաշնակցական երիտասարդութեան համեմատական ուժը... Ութսուն անգլէն երիտասարդներ, որոնք զինուած են գաղափարներով, իրենց ներկայացուցած սարսափելի «վտանգով» կը հրաւիրեն բիրտ գործարարութիւնը հարիւր ոստիկանի... Այս է իշխանութեան կողմէ ճշտուած համեմատական կշիռը մեր տղոց եւ աղջիկներու գաղափարական ուժին: Իսկ մենք կ'ըսենք, որ իշխանութիւնը չարաչար կը սխալի: Այդ ուժին դիմաց ութ հազարն ալ անզօր է, քանի որ իշխանութիւնը այս երիտասարդներու աչքերուն մէջ կը տեսնէ իսկական յեղափոխութիւնը, զոր այլեւս կարելի չէ կասեցնել:

մթերքներու խումբի ապրանքային գիծ է Փենսիլվանիոյ մէջ եւ սննդամթերք կը ներմուծէ Թուրքիայէն: Ընկերութեան գլխաւոր տնօրէն Մուրատ Կուզէլ Նաեւ TASCի գանձապահն է», կը տեղեկացնէ Լինչ:

Աւելին, Կուզէլի ընտանիքը ընդհանուր առմամբ 8100 տոլար նուիրած է Կրեհեմի նախագահական քարոզարշաւին, 28 Յունիս 2016-ին, «հակառակ այն բանին, որ նախորդ տարուան Դեկտեմբերին Կրեհեմի դուրս եկած էր այդ մրցարշաւէն: Նուիրատուութիւնը կատարուեցաւ Թուրքիոյ մէջ յեղաշրջման փորձէն անմիջապէս ետք», հարդորած է Լինչ: «Միայն քանի մը շաբաթ անց, Կուզէլ եւ անոր ընտանիքը եւս 10 հազար 800 տոլար նուիրեցին Team Grahamի՝ մէկ օր առաջ, երբ Մուրթուի ընտանիքը նոյն գումարը նուիրած էր 8 Օգոստոսին: Ոչ Մուրթուները, ոչ Կուզէլները չեն հանդիսանար Կրեհեմը ընտրողները: ան կը ներկայացնէ Հարաւային Զարոյայնա»:

Տարօրինակ է, որ Կուզէլ հանրապետական ծերակուտականին գումար կը նուիրէր այն ատեն, երբ

«ան Դեմոկրատական ազգային յանձնախումբի ժառանգութեան խորհուրդի նախագահն էր եւ մօտաւորապէս 300 հազար ամերիկեան տոլար նուիրած էր Հիլըրի Էլիթի թընի նախագահական քարոզարշաւին աջակցող դեմոկրատական յանձնախումբերուն», կ'ըսէ Լինչ: Կուզէլ պէտք է լուրջ պատճառ ունենար՝ ըլլալով կուսակցութեան մը յանձնախումբին ղեկավարը, որպէսզի գումար նուիրէր իրենց հակառակորդին:

Կուզէլ սերտ կապեր հաստատած էր նախագահ Էրտողանի փեսայ եւ Թուրքիոյ գանձարանի ու ֆիւնանսներու նախարար Պերաթ Ալպայրաքի, նախագահի գաւկին՝ Պիլալ Էրտողանի եւ նախագահի խօսնակ Իպրահիմ Զալիլի հետ: Ժամանակ առ ժամանակ, Կուզէլ «կը խնդրէ թուրք պաշտօնէաններու օգնութիւնը իր քաղաքական գործունէութիւնը համակարգելու համար», ինչ

**Արեւելահայերէնի թարգմանեց՝
Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝
Սեդա Գրիգորեան
Շար.՝ էջ 14 ➤**

Արամ Ա. վեհափառ հայրապետը, տարեկիզբին, 2019ն հռչակած էր «Յայ մամուլի տարի»:

Տարին ահա իր աւարտին կը հասնի եւ բնականաբար ժամանակն է հաշուեյարդարի՝ քննելու եւ գնահատելու համար, որ ընդհանրապէս հայ մամուլը ինչպիսի՞ տարի մը բոլորեց, որքանով արդարացուց իր առաքելութեան կապուած մեր ժողովուրդին ակնկալութիւնները:

Յատկապէ՛ս, հայ մամուլը կրցա՞ր յառաջխաղացք նուաճել դէպի ազգային-հանրային ծառայութեան կենսական ու անփոխարինելի դերակատարութեան կոչուած հոգեմտաւոր ազատ ու պատասխանատու բեմի իր բարձունքը՝ ներշնչուելով եւ խորխուսուելով վեհափառ հօր Զայ հովիւի հոգածու կոչերէն եւ գործնական աջակցութեան նախաձեռնութիւններէն:

Երեւութապէս լաւատեսութիւն թելադրող շատ ազդանշաններ նկատելի են, մանաւանդ եթէ հայ մամուլի սահմանումին մէջ համախմբեց այն ամէնը, ինչ մօտէն կամ հեռուէն կապ ունի հայկական զանգուածային հաղորդակցութեան բոլոր միջոցներուն հետ՝ տպագիր թերթերէն մինչեւ ձայնասփիւռի կայանները, էլեկտրոնային պատահներէն մինչեւ համացանցի համատարած եւ համայնակուլ ոլորտները, անոնց լեզուամտածողական ողջ խայտաբղէտութեամբ:

Ակնբախ է համընդհանուր՝ մակերեսային, այլեւ մոլորեցնող աշխուժութիւն մը:

Օրը տոր՝ լրատուութիւն հրամցնող եւ մեկնաբանութիւններ աչքոկոխող ինքնակոչ հասցեատերերը տոր. շատեր սուսկի պէս արագօրէն կը բուսնին, իրենց ներկայութիւնը կը պարտադրեն համացանցի վրայ նաւարկողին եւ, իրենց գործը կատարած վարձկանի ինքնագոհութեամբ, մէկ կողմ կը քաշուին, որպէսզի նոյնքան արագութեամբ փոխարինուին նորեկուկ նմանորդներով:

Ուրիշներ հայ ընթերցողի մտահորիզոնին կը փարին տգրուկի պէս եւ կը մերժեն դադար տալ ամէնօրեայ, նոյնիսկ ժամ առ ժամ երեւալու իրենց ախորժակին, որպէսզի իրենց եւ նմաններու նախասիրած կեղծ ու շինծու լրատուութեամբ «աղբանոց»ի վերածննդ հայ հանրային կարծիքը:

Ահա՛ «Յայ մամուլի տարուան» բերած համընդհանուր աշխուժութիւնը, եւ չկայ բարոյական հեղինակութիւն մը, որ հասարակ մահկանացուներուս պաշտպանէ «fake news»՝ «կեղծ, շինծու լուրեր» կոչուած ապատեղեկատուական, այլեւ հակատեղեկատուական մանրէներ տարածող 21-րդ դարու այսօրինակ ցեցերէն:

Կեղծ ու շինծու լրատուութեամբ յատկորոշուող մերօրեայ հոգեմտաւոր ցեցերու եւ գաղափարական մակարդիներու համատարած գրողը ահաւոր է այն աստիճան, որ արդէն խլուած է մեզ մէ սեփական կողմնորոշումը ունենալու տարրական ազատութիւնը՝ անուանապէս կարծիքի, խօսքի եւ շարժումի անկաշկանդ իրաւունքներն ու ազա-

Հայ Մամուլը Հնարային Դաստիարակութեան Դուրս է. Դաստիարակութեան Մամուլը Աւելին Է, Քան Կուսակցական Մամուլը



Նազարեթ Պերպերեան

տութիւնները երաշխաւորող մեր օրերուն:

Աղէտը անշուշտ համաշխարհային տարողութիւն ունի: Օրինակ՝ անգլիական The Telegraph օրաթերթի 20 Նոյեմբեր 2019-ի համարով իր լոյս ընծայած «Կեղծ Կամ Շինծու Լրատուութիւն» ճիշդ Ի՞նչ է, Ինչպէ՞ս Կրնաս Մատոյ Դնել Անոր Վրան» յօդուածով, ճէյմս Զարսըն կ'ահագանգէր. «Եզր մը չէր, գորշատ քիչ թուով մարդիկ կը գործածէին չորս տարի առաջ, բայց «fake news»-ը այսօր կը նկատուի ժողովուրդ-

ներով թունաւորած ու պառակտած է հանրային կարծիքը՝ «աղբանոց»ի վերածելով հայոց սերունդներու արժանաւոր մեծերու արեամբ ու քրտինքով նուաճուած մեր թերթերը:

Իսկ նման վարձկանի ծառայութեան կոչուած լրագրողներէ, հրապարակագիրներէ եւ մեկնաբաններէ ի՞նչ ազգային-մտաւորական յանձնառութիւն կարելի է յուսալ ու սպասել:

Խօսքը չի վերաբերի միայն հայաստանեան լրատուական եւ քաղաքական դաշտին: Ամբողջ հայաշխարհի տարածքին հայ մամուլը մեծ մասով կանգնած է նոյն կեղծ ու շինծու լուրերով եւ կողմնակալ բեւեռացումով պառակտուելու՝ հայ հանրային կարծիքն ու քաղաքացիական հասարակութիւնը անվճար տահուլութեան անդունդը գլորելու վտանգին առջեւ:



դավարութեան, ազատ վիճարկումի եւ Արեւմտեան կարգուկանոնին սպառնացող մեծագոյն վտանգը: Տանըլտ Թրանսիի նախընտրած եզրը ըլլալով, անիկա նաեւ կոչուեցաւ 2017-ի Տարուան բառը՝ ժողովուրդներու միջեւ լարուածութիւններ առաջացնելով եւ ընկերային լրատուամիջոցներու կանոնակարգման գաղափարներու առաջնորդելով:

Աղէտին ահաւորութիւնը կը բարդանայ որոշապէս այն նկատառումով, որ թէ՛ «fake news»-ի անարգել տարածումը, թէ՛ անոր հակակշռումի կառավարական կամ միջկառավարական ճիգերը յղի են մարդկային հիմնական իրաւունքներու եւ ազատութիւններու կաշկանդման ու ոտնակոխման վտանգներով:

Հետեւաբար, աղետին համաշխարհային տարողութիւն ունենալը ոչ միայն «մեղմացուցիչ դէպք յանցանակ»ի միտքարարն է հայերուս համար, այլեւ ողբերգական հարուած կը հասցնէ մեր բաժան-բաժան եղած ժողովուրդին եւ աջէն ու ձախէն բռնագրաւելու մեր հողերէն հայախաւաք ու հողահաւաք իրականացնելու համազգային մեր ոգեւորումին, նոյնիսկ Յայ Դատի սփիւքեան ուժաքամ պայքարին:

Չգետնող հարուածի տակ ինկած է, առաջին հերթին եւ ամեն բանէ վեր, հայ մամուլին գոյութիւնը իմաստաւորող առաքելութեան կոչումը՝ ազգային-հանրային դաստիարակութեան մշտապես մշտաւորող աղբիւր ըլլալու անաղբը:

Հանրային դաստիարակութեան դպրոցի առաքելութեամբ ոչ մէկ մամուլ կրնայ իր կոչումին բարձրութեան վրայ մնալ, երբ լրատուութիւնը ինքնին կեղծ ու շինծու դարձած է եւ իր կողմնակալ յերիւրանք-

ահաւոր է այս մեծ չարիքէն ձերբազատուելու առաջադրանքով աջէն թէ ձախէն հնչող ահագանգը, որ համաշխարհային հոսանքին համահունչ՝ կ'առաջադրէ վերանայումի ենթարկել կամ կանոնակարգման պատրուակով կաշկանդումի տակ առնել ոչ միայն ազատ կարծիքի արտայայտութիւնները, այլեւ մարդկային եւ քաղաքացիական իրաւունքներն ու ազատութիւնները ընդհանրապէս:

«ՀԱՅ ԼԱՅՑ» անունը կրող տեղեկատուական կայքէջի մը 26 Նոյեմբերի հրապարակումէն առնուած է հետեւեալ հաղորդումը.

«Գազիկ Բամալեանը Ֆէյսբուքեան իր էջում գրել է: - Զոչարեանը իր վարձկանների բերանով մշտապէս ահաբեկում է իշխանութիւններին, թէ բա հենց կրկին գանջ իշխանութեան, բոլորիդ ուղարկելու ենք բանտ... Այն, որ նման կերպ կը վարուէք, ոչ մէկը չի կասկածում, որովհետեւ մէկ անգամ հայաստանեան հասարակութիւնը այդ ամէնը տեսել է: Այն, որ կարող էք նաեւ ֆիզիկական հաշուեյարդար տեսնել, դրան էլ ոչ մէկը չի կասկածում: Պարզապէս դուք այլեւս իշխանութեան չէք գալու, այդ մէկը ականջներիդ օղ արեք»:

Այս մէկը իշխանութեանց կողմնակիցի դիրքերէն «կը գրոհէ» եւ անապաման հակադիր ճամբարէն հնչած սպառնալիքներու պատասխան տալու դիտարկութեանն է չի ներշնչուող: Միեւնոյն ճիշտ յայտարարութիւններով եւ վերջնագիրներով կ'արտայայտուին նաեւ իշխանութեանց դէմ մինչեւ վերջին շունչ պայքարելու հրապարակային երդում կատարողները: Երկու բեւեռներէն հնչող ռազմի շեփոհները առօր-փառօր կը հիւրընկալուին «իւ-

րայիներ»ու պաշտօնական լրատուամիջոցներու էջերուն, ալիքներուն, պատասխաններուն եւ կայքէջերուն վրայ: Բայց դժուար է հանդիպիլ այս կամ այն բեւեռի պատկանող պաշտօնական որեւէ բեմի կամ լրատուամիջոցի, որ տրամադիր ըլլայ հիւրընկալելու կամ արձագանգելու երկու բեւեռներէն եկող հաղորդումներուն ալ՝ կողմի պատկանող լրատուամիջոցի ընկալելու հեռաւորութիւնը պահելով կամ վերապահութիւնը բանաձեւելով հանդերձ:

Հակիրճ, հայ մամուլի պատասխանատուութեան ու արժանահատութեան հիմնական կոչումին՝ հանրային դաստիարակի առաքելութեան կոնակ դարձուցած են գրեթէ բոլորը:

Անկումային այս ընթացքը չի կրնար շարունակուիլ եւ անոր թումբ կանգնելու առաջնահերթ պատասխանատուութիւնը ունին կոչումի տեր հայ մամուլի անանդակիրները, կուսակցական ի՞նչ պատկանելութիւն ալ ունենան:

Մարտահրաւերին արժանաւորապէս պետք է ընդառաջեն յատկապէս հայ մամուլի ազգային-քաղաքական եւ հրապարակագրական-գաղափարական անանդներուն տանամամեակներով դրօշակիր կանգնած դաշնակցական թերթերը, որոնք շուրջ մէկ դարու ճանապարհ կտրած են եւ ինքնահաւատարմօրէն առաջնորդած են մեր ժողովուրդին կենսը՝ դէպի Հայաստանի եւ հայութեան ամբողջական ազատագրութեան աննահանջ պայքարը:

Ի տես հայ հանրային միջավայրը ապականող ու թունաւորող ինքնասպառակ հակամարտութեանց եւ այնքանակողմ գարշահոտ ցեխարձակումներուն՝ որոշապէս դաշնակցական մամուլը ունի գաղափարական եւ բարոյական հեղինակութեան անհրաժեշտ անանդները, որպէսզի քաղաքական ապականումի այսօրուան մթնոլորտին մէջ հանրային հաշուետուութեան կանչէ բոլոր հրձիգները:

Ի վերջոյ դաշնակցական մամուլը միշտ ալ անելին եղած է, քան սոսկ կուսակցական թերթ մը: Դաշնակցութեան դրօշակիրը ըլլալու եւ մեր ուղին պաշտպանելու, հիմնաւորելու եւ հունաւորելու իր ամենէն յանձնառու ծառայութեան մէջ անգամ դաշնակցական թերթը երբեք մտահան ըրած չէ, որ իրեն ծնունդ տուած կուսակցութեան պէս ինք եւս, իբրեւ ՀՀԴ միտքին եւ խօսքին դարբինը, անվիճելիօրէն կը պատկանի իրեն հաւատացող ժողովուրդին, որ միաժամանակ իր գերագոյն դատաւորն է:

Աւելին, ինչպէս որ Դաշնակցութիւնը արդէն ազգային արժեք է եւ կը պատկանի ոչ միայն իր կուսակցականներուն, այլեւ իր Ծրագրին ու Գործին հաւատացող մեր ժողովուրդի բոլոր գաւառներէն, այնպէս ալ դաշնակցական թերթը համարատու է ոչ միայն կուսակցական այս կամ այն մարմինին, այլեւ ամեն բանէ վեր իր ընթերցող հասարակութեան՝ իրեն փարած մայր ժողովուրդին:

ԹՐԵԱԿԱՆ ՄԱՄՈՒԸ ԱՐՁԱԳԱՆՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ ՅԱՐՁԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԻ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄՆԵՐՈՒՆ

«Էրմէնի Յապեր».-Շուէտի մէջ գրանցուած «Nordic monitor» կայքը հրապարակած էր յօդուած մը, որուն համաձայն Թուրքիա Յայաստանի դէմ ռազմաօդային գործողութիւններու ծրագիր մշակած է: Ծրագիրը կը կրէ «ALTAY» ծածկագիրը:

Շուէտի մէջ գործող այս կայքը կը համակարգէն թուրք լրագրողներ: Անոնք բոլորն ալ կը համարուին «Ֆէթիւլլահական ահաբեկչական կազմակերպութեան» (FETO) անդամներ:



Թրքական իշխանամետ մամուլը անդրադարձած է այդ հրապարակումին՝ նշելով տեղեկութիւնները հրապարակող լրագրողները անուանելով դաւաճաններ, որոնք անել կացութեան կը մատնեն Թուրքիան եւ կը գործեն պետական շահերուն դէմ:

Ուշագրաւ է այն հանգամանքը, որ իշխանական մամուլը ոչ թէ կը հերքէ «ALTAY» ծածկանունով Յայաստանի դէմ զինուորական արշաւի ծրագիրին առկայութիւնը եւ կասկածի տակ կ'առնէ նման ծրագիրի մը գոյութիւնը ընդհանրապէս, այլ հրապարակողները կը մեղադրէ պետական դաւաճանութեամբ:

Թրքական մամուլը նոյնպէս կ'ընդգծէ այդ տեղեկութիւնը հրապարակողներուն կիւլենական շարժման անդամ ըլլալու հանգամանքը եւ կ'անդրադառնայ Յայաստանի ու Յունաստանի արձագանգներուն:

Յունական մամուլի էջերուն վրայ տեղ գտած մեկնաբանութիւններուն մէջ կան այնպիսի տեսակետներ, որոնք համաձայն՝ Սուրիայէն ետք չի բացառուիր, որ Թուրքիան հայեացքը ուղղէ դէպի Յայաստան:

Ս. ՄԻՆԱՍԻ ՊԱՏԱՐԱԳ

Ուրախութեամբ կը տեղեկացնենք, որ երկար տարիներու ընդհատումէ ետք այս տարի քաղցր աւանդութեան համաձայն պիտի նշուի Ս. Մինասի տօնը, որ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 10 Դեկտեմբեր 2019-ի առաւօտեան ժամը 9:30-ին Ս. Բառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ:

Ս. Եւ Անմահ Պատարագ պիտի մատուցանէ՝
Յոգշ. Ս. Մանուկ Աբղ. Պրիխանեան

Յընթացս Ս. Եւ Անմահ Պատարագին տեղի պիտի ունենայ ջրօրինէք: Օրուան պատգամը պիտի փոխանցէ եւ ջրօրինէքը պիտի կատարէ՝

**Բերիոյ Նայոց Թեմի Առաջնորդ
Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան:**

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու սոյն հոգեպարար արարողութեան:

Յալէպ, 4 Դեկտեմբեր 2019

**Դիւան
Ազգ. Կրօնական Ժողովի**

Ս. Յակոբի Տօնին Եւ Եկեղեցւոյ Անուանակոչութեան Առիթով

**Նսկումի Շաբաթ
9-15 Դեկտեմբեր 2019**

**Նովանաորութեամբ՝
Բերիոյ Նայոց Թեմի Առաջնորդ
Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի**

Ս. Յակոբ Մծբնայ Յայրապետին յիշատակին տեղի պիտի ունենան.

**Նսկումի ժամերգութիւններ եւ քարոզախօսութիւններ,
երեկոյեան ժամը 4:00-ին Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ:**

- *Երկուշաբթի, 9 Դեկտեմբեր 2019 Յոգշ. Ս. Մանուկ Աբղ. Պրիխանեան
- *Երեքշաբթի, 10 Դեկտեմբեր 2019 Արժ. Ս. Յունիկ Ա. Զիւն. Սեդրաքեան
- *Չորեքշաբթի, 11 Դեկտեմբեր 2019 Արժ. Ս. Մաշտոց Ա. Զիւն. Արապաթեան
- *Յինգշաբթի, 12 Դեկտեմբեր 2019 Արժ. Ս. Նարեկ Ա. Զիւն. Չերէնցեան
- *Ուրբաթ, 13 Դեկտեմբեր 2019 Արժ. Ս. Արշակ Զիւն. Ալաճաճեան

***Շաբաթ, 14 Դեկտեմբեր 2019**
Եպիսկոպոսական Ս. Եւ Անմահ Պատարագ եւ ջրօրինէք կը քարոզէ եւ օրուան պատգամը կը փոխանցէ հաւատացեալ ուխտաւորներուն
Գերշ. Ս. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան
Առաջնորդ Բերիոյ Նայոց Թեմի
Առաւօտեան ժամերգութիւն ժամը 8:00-ին,
Ս. Եւ Անմահ Պատարագ ժամը 9:30-ին:

***Կիրակի, 15 Դեկտեմբեր 2019**
Առաւօտեան ժամերգութիւն ժամը 8:30-ին,
Ս. Եւ Անմահ Պատարագ ժամը 9:30-ին,
Կը պատարագէ Արժ. Ս. Գառնիկ Զիւն. Չափանեան

Ծանօթ. - Նսկումի արարողութիւններուն երթեւեկը ապահովուած է ժամը 3:30-ին, Ս. Աստուածածին Եկեղեցին:

**Ս. Յակոբ Եկեղեցւոյ
Թաղական Խորհուրդ**

ՍԱՐԿԱԽԱԳԱՅ ԶԵՆՆԱՊՐՈՒԹԻՒՆ ՀԱԼԷՄԻ ՄԷՋ

Ուրախութեամբ կ'ուզենք տեղեկացնել թէ, Կիրակի, 8 Դեկտեմբեր 2019-ին Սրբոց Բառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ յընթացս Ս. Եւ Անմահ Պատարագին 13 դպիրներ պիտի ստանան Սարկաւագական կարգ:

Զեռամբ՝
**Գերաշնորհ Ս. Մասիս Ս. Եպս. Չօպուեանի
Առաջնորդ Բերիոյ Նայոց Թեմի
Խարտաւիլակութեամբ՝
Յոգշնորհ Ս. Մանուկ Աբղայ Պարիխանեանի**

-Սկիզբ պատարագի՝ ժամը 9:30-ին
-Զեռնադրութիւն՝ ժամը 10:30-ին

Կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը քաջալերելու մեր ազգի զաւակները եւ մասնակցելու հոգեպարար արարողութեան:

Յալէպ, 4/12/2019

**Դիւան
Ազգ. Կրօնական Ժողովի**

«ԲՐԻՍԱՎՓՈՐ» ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նովանաորութեամբ՝
**Բերիոյ Նայոց Թեմի Առաջնորդ
Գերշ. Ս. ՄԱՍԻՍ Ս. ԵՊՍ. ՉՕՊՈՒԵԱՆԻ**

«ԲՐԻՍԱՎՓՈՐ» ԳՐԱԴԱՐԱՆԻ

100 Ամեակի
**ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ՅՈՒՅՂՆԵՆՆՈՒՄ ԵՒ ՎԱՃԱՌԸ**

Շաբաթ, 11 Յունուար 2020 ի երեկոյեան ժամը 5:00-ին,
Արամ Մանուկեան Ժողովրդային Տան «Լ.Շաքո» Սրահէն Ներս. Վիլաներ-Նալէպ:

**ԲԺՇԿԱԿԱՆ
ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ՎԱՃԱՌԸ**

Տիկ. Անահիտ Զասսիս իր ամուսնոյն եւ նահատակ որդւոյն նախածեռնած բժշկական արդիական կօշիկներու վաճառքը կը շարունակէ:

**Յասցէ՝ Յալէպ-Սուլէյմանիէ-Զալլաս թաղ:
Յեռաձայն՝ 2227517 - 4614258 - 0944 960063**

ԿՐԱՍՏՆՈՏԱՐԻ ՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐՈՒՆ ՈՒՂԱՐԿԱԾ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆՂԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱԼԷՊ ՀԱՍԱԲ

Չորեքշաբթի, 4 Դեկտեմբերի առաւօտեան Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցի հասաւ Կրաստնո-

Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց



տարի հայ գործարարներուն նուիրատուութեամբ Հալէպի հայ համայնքին ուղղուած մարդասիրական օժանդակութիւնը՝ 80 թոն ալիւրը:

Կրաստնոտարի հայ գործարարներուն, ի մասնաւորի տիարք՝ Արման Ճուղուլեանին եւ Աշոտ Պապոյեանին, դիտել տալով որ հայութիւնը, ո՛ր որ ալ գտնուի, ինչպիսի՛ պայ-



մաններու մէջ ալ յայտնուի, անքակտելի կապերով կապուած է: Այս կապը կը մղէ, որ մէկս միւսին զօրավիգ կանգնինք ու մեր միջեւ հաստատուած կամուրջները ամուր պահենք:

ՀՀ Հալէպի գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգսեան դիտել տուաւ, որ Սուրիոյ տընտեսական անցուկ պայմաններուն մէջ մարդասիրական նման օժանդակութիւնը երախտիքով ընդունուեցաւ: Հալէպի ժողովուրդին կողմէ:

ՀՀ Մարդասիրական խումբի Հիւպատոսութեան ներկայացուցիչ գնդապետ Արկատի Տոնոյեան, իր կարգին յայտնեց, թէ Կրաստնո-

տարի հայ գործարարներուն նուիրատուութեամբ Հալէպի հայ համայնքին եւ տեղացի ժողովուրդին բաշխուելու համար:

տարի հայ գործարարներուն այս ներդրումը մեր ժողովուրդին խաղաղասիրութեան ու մարդասիրութեան դրսեւորումն է:

Օժանդակութեան բաշխումը

Օժանդակութիւնը ստանձնեց Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Հալէպի Գործադիր Մարմինը: Օժանդակութենէն մաս մը տրամադրուեցաւ նաեւ սուրիական Կարմիր Մահիկ Միջազգային Կազմակերպութեան, որպէսզի ան իր կարգին բաշխէ Հալէպի բնակչութեան բոլոր բաղադրիչներուն:



Այս առիթով Բերիոյ Հայոց Թեմի

յառաջիկայ օրերուն պիտի կատարէ Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Հալէպի Գործադիր Մարմինը:

ԹԱՏՐՈՒՆԻ ՀԱՍՅԸ

Սազօ հայոյեան

Ահա այսպէս, բաւական յոգնութենէ ետք կրցանք յաջողցնել «Եսի Մարդը» թատերգութեան բեմականացումը: Ահաւասիկ կրցանք կտրել սատանային ոտքը եւ բեմ բարձրացնել Լեւոն Շանթի ազգային գերագանց գործերէն մէկը: Նախ կ'ուզեմ երախտագիտութիւնս յայտնել Համազգայինին եւ պատիւ կը զգամ այսպիսի մեծ գործի մը, մանաւանդ Համազգայինի հիմնադիր Լեւոն Շանթի այս կտորին ներկայացման մէջ դեր ստացած ըլլալուս համար:

Երբ առաջին անգամ կարդացի թատերգութիւնը, պահ մը մտածեցի, որ ինչ մեծ պատասխանատուութիւն է աս գործը ներկայացնելը: Հայկական հարուստ եւ մեծ մշակոյթի ջահը վառ պահել ու ծառայել, այս է մեզմէ պահանջուածը, եթէ կ'ուզենք գոյատեւել իբրեւ հայ:

րելի էր նաեւ ժողովուրդ դաստիարակել: Կրնանք ըսել, որ հայկական թատրոնը կը դասուի աշխարհի ամենէն հին թատրոններու շարքին: Մեծ ուրախութեամբ եւ մօտէն հետեւած եմ գաղութի թատերական ներկայացումներուն եւ բախտը ունեցած եմ Լիբանանի մէջ եւս ներկայ գտնուելու քանի մը ներկայացումի, որովհետեւ անկեղծօրէն թատրոնի սիրահար եմ: Պետք է խոստովանիմ, որ թատերական իրաքանչիւր ներկայացում ինծի համար ուրախութիւն է, խրախճանք է, սոսն է եղած, ինչ մեղքս պահեմ:

Թատերականի հսկան արդէն արթնցած է: Համազգայինի «Լեւոն Շանթ» թատերական միաւորը իր ուսերէն փոշին թօթափելով ոտքի կանգնած է: Այ գործելու ժամանակն է: Հաւատացէ՛ք, մեր թատրոնի գարթունքը իսկապէս հոգեկան գո-



«Եսի Մարդը» 1901-ին գրուած թատերգութիւն մըն է, որ այսօրուան մէջ ալ կը տեղաւորուի, կը ներկայացնէ պայքարը ազգայինին եւ թոյլամորթին միջեւ: Սեդրաքի եւ Մուշեղի պայքարը բաւական բարդութիւններ ունի: Սեդրաքին տագնապը պարտականութեան եւ զգացումներուն բախումին հետեւանքով կը յառաջանայ, իսկ Մուշեղին իրապաշտ մօտեցումն ու անցեալի խաբիաբումները հակադրուելով կը տագնապեցնեն զինք:

հունակութիւն պիտի տայ մեզի եւ անպայման մեր հանդիսատեսը ինքնակոչ, կամաց-կամաց պիտի վերադառնայ թատրոն: Մեր գաղութի թատերական կեանքը վերածնունդի կարիքը ունի:

Փառք ու պատիւ Լեւոն Շանթին եւ իր հիմնադիր ընկերներուն: Իսկապէս շատ հպարտ եւ ուրախ եմ «Եսի Մարդը» գործին յաջողութեան մասնակից դառնալուս համար: Մեծ շնորհակալութիւն բոլոր անոնց, որոնք ճիգ չխնայեցին այս գործի յաջողութեան եւ վերջապէս յատուկ շնորհակալութիւն այս թատերական կազմին, ընտանիքին՝ իր դերասաններով, բեմադրիչով եւ քուլիսի անյայտ գիտնորներով: Իսկապէս պատիւ էր ձեզի հետ աշխատիլ, ընկերներ, այս պատասխանատու գործը լաւագոյն ձեւով ներկայացնելու համար:

Ակնառու վկայութիւն մը պէտք է տալ այս առիթով, թատրոնի երիտասարդականացման կարեւորութիւնը: Այս ներկայացումը առիթ հանդիսացաւ յայտնաբերելու նոր ու երիտասարդ ճիւղեր, որոնք շատ լաւ տպաւորութիւն ձգեցին: Առողջ սերնդափոխութեան կարեւոր քայլը այս է, որպէսզի ճիշդ եւ լաւ ձեւով գոցենք պատերազմի եւ խաւի մը եսասիրութեան հետեւանքով յառաջացած սերունդներու այս բացը:

Մեծ դպրոց մըն է թատրոնը, կեանք մըն է, գործելածն է եւ արտայայտման գեղեցիկ միջոց մը ինծի համար: Անոր աշակերտը կը մնամ ամենայն ուրախութեամբ եւ միշտ ծարաւ նորը սորվելու, ծառայելու հայ մշակոյթը:

Հայ թատրոնը շատ հին պատմութիւն ունի: Մեր նախնիները Արտաւազդ թագաւորի օրերէն հասկցած էին, որ թատրոնի ճամբով կա-

ՅՈՒՐԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՆՈՒԻՐՈՒԾ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏԻ ԾՆՆԴԵԱՆ 150-ԱՄԵԱԿԻՆ

«Միրեցէ՛ք գիրարշատ Միրեցէ՛ք
որպէսզի Ապրիք»:
Հովանաւորութեամբ Բերիոյ

երաժշտութիւնը ազգային արժէք է,
գոր պէտք է յայտնաբերել ու պահ-
պանել»:



Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Արհի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեանի, կազմակերպութեամբ Հայ Կաթողիկէ Մշակութային Յանձնախումբին, Կիրակի, 1 Դեկտեմբեր 2019-ի երեկոյեան ժամը 7:00-ին «Աղաճանեան» սրահէն ներս տեղի ունեցաւ յոբելեանական հանդիսութիւն նուիրուած Կոմիտաս Վարդապետի Ծննդեան 150-ամեակին:

Հանդիսութեան ներկայ էին՝ Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Արհի. Տր. Պետրոս Արք. Միրիաթեան, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդի ներկայացուցիչ Հոգ. Տր. Մանուկ Աբեղայ Պարիխանեան, Հայ Աւետարանական համայնքի

Ապա ան միութեան անուանով շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակիցներուն, ՀԵԸ-ին, Համագ-



գայինի վարչութեան եւ Գառնի պարիսպներին, որոնք իրենց ներդրումը բերին ձեռնարկի կազմակերպման:



Գեղարուեստական յայտագիրը սկսաւ Թամար Աղայեանի տպաւորիչ ամուսնով: Պարոյր Սեւակի «Անլուելի Չանգակատուն» Պոեմը յուզեց ներկաները: Կոմիտաս վարդապետի ոգեկոչումով լուսարձակի տակ առնուեցաւ անոր ազգային, երաժշտական եւ մարդկային արժանիքները:

Հանդիսութեան ներկայ էին՝ Տր. Ներսէսեան, ազգային, բարեսիրական, մարզական, մշակութային, եկեղեցական եւ կրթական միութիւններու եւ հաստատութիւններու ներկայացուցիչներ, քահանայ հայրեր, վարդապետներ, ՀԱՄԻ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Մանուկ Զեօշկերեան եւ Համագգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ Կարո Ալեքսանեան, ինչպէս նաեւ ՀՀ Մարդասիրական խումբի ներկայացուցիչներ:

Հանդիսութիւնը բացուեցաւ Սուրբիոյ եւ Հայաստանի քայլերգներով, ապա ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին Սուրբիոյ Նահատակներուն յիշատակը:



Բացման խօսքով Հանդէս Եկաւ ՀԿՄՍ Յանձնախումբի անդամ Պողոս Սաճոյեան: Ան ներկայացուց Կոմիտասը յայտնելով որ. «Կոմիտաս անուն մըն է նուիրական, իր մշակած հարուստ ազգային երաժշտութեամբ, իր տխուր եւ դաժան ճակատագիրով: Ան ունեցաւ տեսիլք մը եւ երաժշտական հարուստ գիտութիւն՝ համարձակօրէն ընդգծելու որ

Հանդիսութիւնը բացուեցաւ Սուրբիոյ եւ Հայաստանի քայլերգներով, ապա ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին Սուրբիոյ Նահատակներուն յիշատակը:

Բացման խօսքով Հանդէս Եկաւ ՀԿՄՍ Յանձնախումբի անդամ Պողոս Սաճոյեան: Ան ներկայացուց Կոմիտասը յայտնելով որ. «Կոմիտաս անուն մըն է նուիրական, իր մշակած հարուստ ազգային երաժշտութեամբ, իր տխուր եւ դաժան ճակատագիրով: Ան ունեցաւ տեսիլք մը եւ երաժշտական հարուստ գիտութիւն՝ համարձակօրէն ընդգծելու որ

կտորները, որոնց մշակումը կատարած էր Սերկէյ Ասլամազեանը: Զառեակին մաս կը կազմէին Դաւիթ Մելքոնեան, Կարո Արսլանեան, Շահէ Աւագեան եւ Սարգիս Աւագեան:

Կոմիտասի Կենսագրական գիծերը համառօտ կերպով ներկայացուցին Տիկ. Սոնա Գրտանեան-Պրզտիկեան եւ Տիկ. Թամար Կիլոյեան-Տատաղեան: Ընթացքին կենդանի պատկերով ներկայացուեցաւ Կոմիտասի եւ Արշակ Զոպանեանի երկ-
ժիրայր Կարապետեան
Շար.՝ Էջ 14

ԱՐԵՎԵԼԱՔԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ(1)

Արմենակ Եղիայեան

Մեր լեզուն հետզհետէ աւելի կ'ազդուի արեւելահայերէնէն, ինչ որ ըստ ինքեան այնքան ալ մտահոգիչ պիտի չնկատուէր, - յատկապէս գոնէ իր անխուսափելի բնոյթին բերումով, - եթէ միշտ առողջ ըլլային այդ ազդեցութիւնները. ահա ճիշդ այստեղ է որ պարտինք ինչեցնել ահագանգը, եթէ իրապէս լսող ունենանք:

Այս եւ հետագայ քանի մը յօդուածներով պիտի անդրադարձ կատարուի այս երեւոյթին «Արեւելաբանութիւններ» ընդհանուր խորագրին տակ:
* * *

1. «Թալ Ապիատ քաղաքի մօտակայքը ականապատ մեքենայ պայթած է, ինչի հետեւանքով 10 մարդ մահացած է, եւ 25 մարդ վիրաւորուած ստացած է»:

Այս տեղեկութիւնը քաղած ենք արեւմտահայերէն առցանց կայքէ մը, որ իր կարգին գայն ենթադրաբար քաղած է արեւելահայ աղբիւր մը՝ եւ նոյնութեամբ փոխանցած իր արեւմտահայ ընթերցողներուն:

Այս հատուածին մէջ մեզ կը հետաքրքրեն երկու արեւելաբանութիւններ, որոնք այսպէս անփութօրէն ու անխղճօրէն կը հրամցուին ընթերցողներուն, որոնց մեծ մասը ենթադրաբար արեւմտահայ է:

ա) Առաջինը ինչ դերանունն է, որ բնոյթով հարցական է, եւ ամէն հարցական դերանունի պէս միաժամանակ յարաբերական ալ է: Այո, է՛, սակայն ասոր կողքին մեր բարբառը ունի իր առանձնայատկութիւնն ալ. արեւմտահայերէնը ինչ-ը իբրեւ յարաբերական դերանուն կիրարկելու սովորութիւն չունի՛, թող որ արեւելահայերն ալ իրենց ովսանն կը պայքարին այդ կիրարկութեան դէմ, առնուազն կը փորձեն սահմանափակել գայն: Սակայն ուշադիր ու սրտցաւ արեւելահայերու կողքին կը գտնենք նաեւ անփոյթ ու անզուսպ բարբարոսներ, որոնց հոգը անգամ չէ: Ինչպէս հոգը չէ նաեւ արեւմտահայ լրագրողին, որ կուրօրէն ու մեքենաբար կ'ընդօրինակէ ու կը քշէ ընթերցողին առաջը:

Մինչդեռ պէտք եղածը որ յարաբերական դերանունն է, չիաշուած տակաւին շարադասական անհարթութիւններն ալ:

Ուրեմն՝ «Թալ Ապիատ քաղաքի մօտակայքը պայթած է ականապատ մեքենայ մը, որու հետեւանքով մահացած է տասը հոգի»:

բ) Յաջորդ արեւելաբանութիւնը, արեւելահայ տգետ լրագրողներու յերիւրած վիրաւորում բառն է, որ իր կարգին հալած իտի պէս կու տրուած է արեւմտահայ ամենագետ լրագրողին կողմէ:

Երբ փորձանք մը, օրինակ՝ պայթում մը կամ արկած մը, պատահի, մարդիկ, իմա՛ գոհեցող, վիրաւորում չէ որ կը ստանան, այլ վերք կը ստանան:

Վիրաւորումը արարք մըն է, ինչպէս՝ կառուցումը, թուլացումը, յիշատակումը, մոռացումը եւ բոլոր ում ածանցը կրող բայանունները, որոնք գործողութիւն ցոյց կու տան եւ ո՛չ թէ գործողութեան արդիւնքը: Մինչդեռ վերքը՝ գործողութեան մը արդիւնքն է, այս պարագային՝ հետեւանքը: Եւ ստացուածը ա՛յս է: Պայթումը, արկածը վերք կը յառաջացնեն եւ ոչ թէ վիրաւորում:

Վիրաւորում ստանալը կեղծ, յերիւրածոյ, բռնազբօսիկ մտածողութիւն մըն է, որ հայերէն չէ, հայեցի դրոշմ ալ չունի, եւ Աստուած գիտէ, թէ ո՛ր եօթնօտար լեզուին յատուկ կառուցում մըն է, որ այսպէս բռնազբօսաբար, աններելի ծեծծեքումով մը բերուած ու պատուաստուած է արեւելահայերէնին, իսկ անկէ ալ՝ արեւմտահայերէնին:

Եւ այսպիսիները հետզհետէ կը բազմանան արեւմտահայ մամուլին մէջ՝ ճնշիչ դառնալու աստիճան:

Ուրեմն պարտինք սկզբնական մէջբերումը շարադրել սա՛պէս.

«Թալ Ապիատ քաղաքի մօտակայքը պայթած է ականապատ մեքենայ մը, որու հետեւանքով մահացած է տասը հոգի, իսկ տասը ուրիշներ ալ վերք ստացած են»:

Ինքս պիտի նախընտրեի ըսել՝ «...տասը ուրիշներ ալ վիրաւորուած են»:

2. «Որոշները իսկոյն համաձայն գտնուեցան այդ առաջարկին»:

Այս ոճը՝ որոշները, որ ահա քանի մը տարի է ի վեր մուտք գործած է արեւելահայերէնի մէջ, սոսկումով սկսեք էինք դիտել, երբ արդէն ան հեզասահ, բայց շատ ինքնավստահ քայլերով մուտք գործեց արեւմտահայ բարբերու մէջ, յատկապէս պոլսահայ թերթերու դռներէն, ուր ան իրարու ձեռքէ կը խլուի օրնիբուն:

Ինծի ծանօթ լեզուներէն ֆրանսերէնի յատուկ certains բառն է այս, - որ դերանունական յատկութիւնն ալ կը ցուցաբերէ, - սակայն անշուշտ չեմ բացառեր, որ ան գտնուի նաեւ ուրիշ՝ արեւելահայուն մատչելի լեզուներու մէջ, ուրկէ ալ ստրկամտաբար ընդօրինակուած ու մոծուած է Ռաֆֆիի, Չօրեանի, Սեւակի վճիտ լեզուին մէջ, ուր ան գոյութիւն չունէր մօտիկ անցեալին:

Հայերէնը պատմականօրէն ու հանրօրէն այս հասկացութեան յատկացուցած է ոմանք դերանունը, ուրեմն՝ «Ոմանք իսկոյն համաձայն գըտնուեցան...»:

* * *

Այս բոլորին մէջ պէտք չէ հակաարեւելահայ ձգտումներ տեսնել, քա՛ն իցի:

ՀԵՏԵԵԼՈՎ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՈՏԱՐՅԵՏԵՐՈՒՆ (ծննդեան 135-ամեակին առիթով)

Ե.



Լեոն Շառոյեան

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՏՈՒՂԱՐՁ

Վարուժան Պելճիքայեան Երկիր վերադարձաւ 1909 Յուլիսին:

Արդէն տարի մը անաչ հռչակուած էր Օսմանեան Սահմանադրութիւնը եւ անոր իբրեւ հետեւանք՝ ազատութեան հովեր կը փչէին Վոսփորի ափերէն մինչեւ գաւառի խուլ անկիւնները...:

Այդ օրերուն Վարուժան չուզէր Պոլիս մնալ: Շիտա՛կ իր ծննդավայր գիւղը գնաց՝ տասներեք տարուան կարուտը անելու: Կարօտցած էր իր ընտանիքը, կարօտցած էր իր մանկութեան յիշատակները, կարօտցած էր ամբողջ գիւղը: Գիտէր, որ զինք կարօտով սպասող մայր մը ունի այնտեղ (յիշել՝ իր «Կարօտի կամակ») ու տակաւին՝ հոն էր հայրն ալ, որ կարճ ժամանակ անաչ պանդխտութենէ տուն դարձեր էր իրեն նման:

Այս հասկնալի կարօտներու կողքին, զինք դէպի գաւառ քաշող երկրորդ ուժ մըն ալ կար, - հայրենի հողը: Առիթով մը գրած էր արդէն. «Անպատճառ ամբողջ Հայաստանը պէտք է տեսնել: Կ'ուզեմ համբուրել այն տեղերը՝ ուր նահատակ մը ինկաւ կամ հերոս մը կոխեց: Մենք այնքան մեծ ենք, որքան որ հողէն կը խմենք մեր զգացումները»:



Դանիել Վարուժան եւ կողակիցը՝ Արաքսի (Սեբաստիա, 1910)

Բայց երոպական համալսարանական վկայականով զինուած այս երիտասարդը ի՞նչ պիտի ըներ Բրզնիկի մէջ:

Անշուշտ որ գիւղը արժանապատիւ գործի ո՛չ մէկ հնարաւորութիւն կամ հեռանկար կրնար տալ իրեն: Բայց կար Սեբաստիան, նահանգին կեդրոնը, որ ոտքով մէկ ժամ հեռու էր Բրզնիկէն: Ուստի, Վարուժան, նոյն տարուան աշնան, ուսուցչական պաշտօնի կոչուեցաւ Սեբաստիոյ Ազգ. Արամեան երկսեռ վարժարանը, ուր պիտի դասաւանդէր հայերէն եւ ֆրանսերէն:

Համեստ սենեակ մը վարձեց քաղաքին մէջ ու դարձաւ... «վարժապետ»:

Կրնայ արհամարհական թուիլ իմ վերջին բառը, սակայն արդարութիւնը կը պահանջէ շեշտել, որ Վարուժանի նման ընտիր համալսարանական մը, մասնաւոր բազմակողմանի զարգացումի տեր մտաւորական մը, գաւառէն դուրս՝ բարենպաստ այլ պայմաններու մէջ, բարձրագոյն պաշտօններուն արժանի էր: Եթէ ան հայածին չըլլար, ու ըսենք՝ երոպական ծնունդ ունենար, Կանտեն բերած իր վկայականով (Licencie' en sciences politiques) ու մշակութային իր լայն պաշարով ամենայն դիւրութեամբ ՓԱՅԼՈՒՆ ԴԻՎԱՆԱԳԵՏ ՄԸ կրնար դառնալ՝ դեսպանի կամ հիւպատոսի կոչումով...:

Բայց գաւառը զինք վերածեց խոնարի ուսուցիչի մը... 5 օսմանեան ուկի նկուն ամսականով: Ի՛նք ալ շուտով պիտի անդրադառնար, թէ ասիկա «գործ մըն է՝ որ ապագայ չունի: Բայց... եղիցի կամք Հայրենեաց» (բառերը իրն են):

Արամեան վարժարանի աշակերտներէն Առաքել Պատրիկ, որ Վարուժանի մասին լման գիրք մը գրեց ու հրատարակեց 1965-ին, այնտեղ պատմած է առատ ու ընդարձակ յուշեր՝ իր սիրելի ուսուցչին դպրոցական այդ տարիներէն:


Առաքել Պատրիկ կը պատմէ որ օր մը, ամրան արձակուրդին, քանի մը ընկերներով որոշեցին Վարուժանի տունը երթալ, Բրզնիկ գիւղը:

Գիւղին մօտակայքը, տղաքը պահ մը կանգ առին ճի՛շդ այն գետին եզերքը, որուն ակնարկած էր Վարուժան՝ Թեոփիկ Տարեցոյցին մէջ տպուած իր ինքնակենսագրութեան մէջ («մանկութիւնս անաճ է գետեզերքներուն վրայ բաղդրուն քար նետելով անառակօրէն...»):

Երբ հոն հասան, ի՛սկապէս տեսան բաղդր՝ որոնք, հաւանաբար այս անձանօթ այցելուներէն վախնալով, արագ թեւաբախումներով գետ կը նետուէին...:

Տղոցմէ մէկը՝ Խորենը, ձայն տուաւ խումբի իր ընկերներէն Տիգրանին. «Տիգրան, քար մըն ալ դո՛ւն նետէ սա բաղդրուն, գուցէ օր մը դուն ալ Վարուժան դառնաս...»:

Յետոյ գիւղ մտան, հիւրասիրութեան Վարուժանի կողմէ: Բարձրացան



Վարուժանի երեք զաւակները

նաեւ անոր տան վերնայարկը, դիտեցին գրողարանը՝ որ լեցուն էր հայերէն, իտալերէն, ֆրանսերէն հատորներով: Վարուժան իրենց ընթերցեց Տանդէի քերթուածներէն հատուած մը՝ իտալերէն բնագրով, յետոյ ըսաւ. «Կ'անդրադառնա՞ք իտալերէն լեզուին գեղեցկութեան: Օ՛, իտալերէնը է՛րգ է, է՛րգ...»:

Մինչ կը պաշտօնավարէր ի Սեբաստիա, Պոլսոյ մէջ 1910-ին լոյս տեսաւ Վարուժանի «Յեղին սիրտը» հատորը, որուն ակնարկեցինք արդէն:

Այդ նոյն տարին, 1910-ին, Վարուժան ամուսնացաւ (26 տարեկան էր), իր կեանքը կապելով սեբաստաբնակ հայուհիի մը՝ Արաքսի Թաշճեանին: Այս միասնութիւնը դիւրին չեղաւ սակայն: Մինչեւ որ սիրահար գոյգը արժանանար Ս. Պասկի խորհուրդին՝ ան վեց ամիս ապրեցաւ սրտմաշուք ու սրտմտանք պատճառով վիպային անցուդարձերու բազմազոյն ողիսական մը:

Ի՞նչ էր պատահածը: Պատմէ՛ք.-

Ըսինք, որ Վարուժան կը պաշտօնավարէր Սեբաստիոյ Ազգ. Արամեան վարժարանը: Ան, միաժամանակ, հայերէնի մասնաւոր դասեր սկսաւ տալ պարմանուհիի մը՝ Արաքսի Թաշճեանին:

Արաքսին, ըստ տեղական հնամենի բարքերուն, օրօրոցն էր նշանուած էր սեբաստահայ հարուստ ընտանիքի մը զաւկին հետ: Այդ իսկ պատճառով՝ ան իր ուսուցչին տունը կու գար մօրը ուղեկցութեամբ, բամբասանքի առիթ չստեղծելու համար Սեբաստիոյ խիստ պահպանողական հայ միջավայրին մէջ:


Եւ սակայն, պատահեցաւ անխուսափելին: Ուսուցիչն ու պարմանի աշակերտուհին մէկգմէկու սիրահարուեցան խենթերու պէս...:

«Գայթակալի» լուրը թաղէ-թաղ տարածուեցաւ Սեբաստիոյ մէջ:

Արաքսին դասերը դադարեցուցան, անոր ծնողքը շարժման անցաւ՝ փութով կատարելու համար աղջկան պսակը իր խօսեցեալին հետ...:

Բայց Արաքսիին նախընտրութիւնը այլ էր: Ան յամառօրէն կը մերժէր հարս երթալ իր հարուստ նշանածին տունը...: Ատոր փոխարէն՝ կը նախընտրէր «վարժապետ» Վարուժանը:

Այս հարցը սեբաստացիներու գլխաւոր օրակարգը դարձաւ պահ մը: Սեբաստացիք երկու ճակատի բաժնուեցան. ոմանք պաշտպանեցին Վարուժանը եւ ուզեցին որ յաղթանակէ ՍԵՐԸ, ուրիշներ՝ ամօթեցին զինք, իր աշակերտուհին գլխէ հանած ըլլալու մեղադրանքով: Այս ամբողջ թոհուրոհին մէջ՝ երկու սիրահարները կը նամակեցին զաղտնօրէն, կը սրտապնդէին զիրար: Անգամ մը, Վարուժանի կողմնակիցները նոյնիսկ անաչարկեցին իրեն՝ գիշերով փախցնել Արաքսին իր հօր տունէն. սակայն Դանիել կտրականապէս մերժեց այդպիսի բռնարարը մը:



Սեբաստիոյ «Յողդար» պարբերականը

Ի վերջոյ, հարցին միջամտեցին վաղեմի հայրուկապետ Սեբաստացի Մուրատն ու թեմակալ անաշնորդ Թորգոմ Եպս. Գուշակեանը, որոնք կրցան տարհամոզել Թաշճեան ընտանիքը՝ որպէսզի իրենց դուստրը ամուսնանար Վարուժանի հետ (ի դէպ, Վարուժանի համար՝ Սեբաստացի Մուրատը սովորական հայրուկ մը չէր, այլ պատմութեան խորքերէն մեր օրերուն դրկուած իսկական դիւցազուն մը: «Հեթանոս երգեր»ուն մէջ բանաստեղծը Մուրատին եւ անոր կայծակնավագ ձիւն նուիրած է «Բեգաս» գեղեցիկ ու ընդարձակ բանաստեղծութիւնը):

Եւ այսպէս, իրականացաւ պսակը: Ս. Խորանի առջեւ կանգնեցան Դանիելն ու Արաքսին, 15 Օգոստոս 1910-ին: Վարուժանի տնակը բոյրով ու լոյսով լեցուեցաւ.

**Տնակս բոյրով լեցուեցաւ,
Չի ծորթիներ ծորեցան
Պատմութեան զրահները,
Չի արեւով օծուած ոսկի մագերէն
Բուրեան մեղրեր ծորեցան.
Եւ բիբերէն՝ մարգրիտներու պէս փաղփուս՝
Թափփեցան ասուպներ.
Տնակս լոյսով լեցուեցաւ:
(«Գրգանք»)**

Այդ շրջանին Սեբաստիոյ մէջ հրատարակուիլ սկսող «Յողդար» շաբաթաթերթին Ա. թիւը (27 Հոկտեմբեր 1910) արձագանգեց պսակադրութեան լուրին՝ «Անզուգական Վարուժան Ամուսնացած» խորագրով: Թերթին տեսակէտով՝ այս ամուսնութիւնը «գոյգ մը մեծ հատուածներու մերձեցման նախաշաւիղ մը»ն էր, քանզի հարսը լուսաւորչական էր, իսկ փեսան կը պատկանէր կաթողիկէ դաւանանքին...:

Վարուժան ընտանիք կազմեց եւ յաջորդաբար ունեցաւ երեք զաւակներ՝ Վերոնիք, Հայկ եւ Արմէն:

Աշակերտական Անկիւն

ԴՈՒՆ ԸՍԻՐ, ԱՆ ԸՍԱԲ



Աստղիկ Դանիելեան

Ներկայիս ըսի-ըսաւը շատ տարածուած է, մանաւանդ կիներուն մօտ: Տիկ. Ծաղիկ սովորութիւն ըրած է ամէն առտու իր մօտ հաւաքել թաղի կիները՝ նոր նոր լուրեր ստանալու: Առտու է: Տիկ. Ծաղիկի դուռը կը գարնուի: Ան դուռը կը բանայ, եկողը տիկ. Մարին է, դրացին:



- Բարի՛ եկար, Մարի՛:
- Ի՛նչ բարի, ի՛նչ բան:
- Բարին ըլլայ, ի՛նչ պատահած է:
- Վա՛յ, նախ ներս մտնեմ, հիմա կ'ըսեմ:
- Զրամմէ՛:
- Երեկ գիշեր մեր դրացիին աղջիկը գիշերուան ժամը մէկին տուն վերադարձաւ: Աչքովս տեսայ: Աստուած գիտէ, թէ ուր գացեր էր:
- Ամմա՛, իրա՞ւ կ'ըսես: Ի՛նչ խայտառակութիւն: Իրաւ, աղջկան ծնողքն է անշնորհք:
- Գիտե՞ս Ծաղիկ, երեկ գիշեր չկրցայ հանգիստ քնանալ: Կը մտածէի, թէ ո՛ր գացած կրնար ըլլար:
- Աստուած գիտէ:
- Լա՛ւ: Դուն ի՞նչ նորութիւն ունիս:
- Երեկ լսեցի, որ Վարսիկին տղան պիտի նշանուի:
- Ի՞նչ ըսիր, պիտ նշանուի՞:
- Այո՛:
- Վա՛յ, ո՞վ է այդ անբախտ աղջիկը:
- Այսօր կը փորձեմ իմանալ եւ անպայման քեզի կը հեռածայնեմ:
- Գիտե՞ս ինչ, եկ'որ կանչենք Սիրունը, տեսնենք ինչ նոր լուրեր ունի:
- Տիկ. Մարին շատ արագ կը հեռածայնէ Սիրունին, որ շատ չանցած կը միանայ երկու կիներուն:
- Տիկ. Ծաղիկ դիմելով Սիրունին.
- Երկու օր եղաւ ո՛չ երեւցար, ոչ ալ հարցուցիր, մտահոգուեցանք: Ի՞նչ են լուրերդ:
- Տիկ. Սիրուն կը պատասխանէ.
- Եղաւ երկու օր անհանգիստ էի, անկողինն էի: Դժբախտաբար նորութիւն չունիմ: Բան մըն ալ լսած չեմ, ոչ ալ տեսած:
- Տիկ. Մարին՝ Սիրունին.
- Է՛հ, մենք ալ ըսինք, նոր լուրեր կ'ունենաս: Ափսո՛ս:

ԺԱ. Կարգ

Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան

Նովանաստրութեանը՝
Վեր. Նամայնքապետ Յարութիւն Մելիմեանի

Կազմակերպութեանը՝
Նայ Անտր. Բեթել Եկեղեցոյ
Տիկնանց Վարչութեան

ՅՈՒՑԱՆԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌՔ

Ձեռնարկն ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԵՒ ՌԵՏԵՍՏԵՂԵՆԻ

Բացումը փրկի կ'ունենայ Կիրակի, 8 Դեկտեմբեր 2019-ին,
կէսօրուան ժամը 12:00-ին, Բեթել Եկեղեցոյ
«Փոյարեան» սրահէն ներս:

Յուշահանդէսի փակողութիւն՝
8-9-10 Դեկտեմբեր 2019

Այցելութեան ժամեր՝ առաւօտեան ժամը 10:00-8:00:

«ՏԱՍԸ ՏԱՐԻ ԱՌԱՋ ՍՈՒՐԻԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՐԱԶՐ ԻՐԱԿԱՆԱՑԱԲ» ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝ ՌԱՏԻՕ ԵՐԱԶՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՈՔԹ. ՌՈՒՔԷՆ ԳԷՈՐԳԵԱՆԻ ՀԵՏ

Հայ Աւետարանական Բեթել Երկրորդական վարժարանի 5-րդ եւ 6-րդ կարգի աշակերտները իրենց դաստիարակչական ծրագիրին համաձայն՝ լրագրական աշխատանքին ծանօթանալու միտումով, իրենց ուսուցչուհիներուն ընկերակցութեամբ այցելեցին «Ռատիօ Երազ» ի կեդրոն:

տեղական, հայկական եւ միջազգային լուրերուն: Ամբողջական այդ բոլոր լուրերուն մէջէն կ'ընտրենք մեզի հետաքրքրող նիւթերը եւ կը դասատրենք մեր ներկայացնելիքը: Անձնակազմի ընկերներուն կ'ուղղենք այդ լուրերէն բաժիններ, որոնք անոնց հիման վրայ կը մշակեն յայ-



«Ռատիօ Երազ» ի տնօրէնութիւնն ու անձնակազմը սիրալիր ընդունելութեամբ ընդունեցին դիմաւորեցին աշակերտները եւ բովանդակալից բացատրութիւններով լուսաբանեցին զանոնք:

Այս առիթով 6-րդ կարգի աշակերտներ Մարինա Քէշիշեան եւ Արգիսա Ծեօհմէլեան հարցազրոյցը վարեցին «Ռատիօ Երազ» ի պատասխանատու տղոք. Ռուբէն Գեորգեանի հետ:

Մարինա- Յարգելի՛ պրն. Ռուբէն Գեորգեան, կ'ուզենք ի սրտէ շնորհակալութիւն յայտնել «Ռատիօ Երազ» ի անձնակազմին եւ ձեզի, որովհետեւ մեր առաջարկին ընդառաջեցիք եւ առիթ ընծայեցիք, որ մօտէն ծանօթանանք ռատիօյի աշխատանքներուն: Կրնա՞ք մեզի համառօտ տեղեկութիւն տալ, թէ ե՞րբ եւ ինչպէ՞ս ընթացք առին «Ռատիօ Երազ» ի հիմնադրման փուլերը:

Ռ.Գ.-Շնորհակալութիւն ձեր այցելութեան համար: «Ռատիօ Երազ» ը սուրիահայութեան համար երազ մըն էր, որ իրականացաւ: 2010-ին «Ռատիօ Երազ» ի հիմնադրման աշխատանքները սկսան: 2015-ին այս կեդրոնը հիմնուեցաւ եւ օժտուեցաւ աշխատանքի անհրաժեշտ բոլոր կազմաձեւերով: Ռատիօյին նախնական աշխատանքը եղած է երաժշտութիւն սփռել, նաեւ Սուրիոյ պատերազմի տագնապին հետ կապ ունեցող հարցերուն շուրջ հարցազրոյցներ հրամցել իր լսարանին՝ ժողովուրդը լուսաբանելու միտումով: Այսօր ունինք շատ մը ծրագիրներ, որոնք մերթ ընդ մերթ կը սփռուին:

Հ-Կրնա՞ք մեզի ներկայացնել ռատիօյի առօրեայ յայտագիրը: Ինչպիսի՞ ընթացք կ'ունենայ ան:

Ռ.Գ.- Ռատիօյի առօրեան հետեւեալն է:

Մեր օրը կը սկսի շատ կանուխ՝ ժամը 8:00-ին: Կը հետեւինք օրուան

տագիրը, երբեմն այդ լուրերուն մէջէն կ'ընտրեն նիւթեր, որոնք իրենց յառաջիկայ ծրագիրներուն մաս կը կազմեն: Յետմիջօրէին տեղի կ'ունենան արձանագրութիւնները: Այսպէս, օրեր կ'ըլլան, որ շատ խճողուած կ'ըլլանք կեդրոնին մէջ, իսկ ուրիշ օրեր նուազ խճողուած: Այսպէս է գործին ընթացքը: Ունինք տեսակաւոր ծրագիրներ, օրինակ կ'ըլլան «Ընտրէ՛ եւ Նուիրէ՛» ծրագիրով, որ մեր ժողովուրդին կողմէ ընտրուած երգերուն հիման վրայ, երգեր կը նուիրուին: Այդ երգերուն անունները կ'առնենք եւ կը դասաւորենք: Ապա յատուկ ժամով կը սրբիւնենք: Յայտագիրներ ունինք եկեղեցոյ եւ մեր խորհուրդներուն մասին, ունինք ընդհանուր գիտելիքներու բաժին, լուրեր եւ այլն: Սակայն Ռատիօն հիմնական եւ ազդու դեր ունեցաւ եւ կը շարունակէ ունենալ անցնող տարիներուն եւ ներկայիս՝ իր ուղիղ սփռումներով արտագաղթող ժողովուրդը կամրջելու սուրիահայութեան մշակութային եւ եկեղեցական կեանքին:

Արգիսա-Ինչպիսի՞ ծրագիրներ կը մշակէք հետագայ օրերուն համար:

Ռ.Գ.-Գալիք օրերուն ունինք թեւաւոր խօսքերու նուիրուած բաժին մը: Այդ խօսքին ծագման, գործածութեան եւ նպատակին մասին տեղեկութիւններ պիտի փոխանցենք ունկնդիրներուն: Ասոր կողքին կան նաեւ ծրագիրներ, որոնք տակաւին սերտողութեան ընթացքի մէջ են:

Մարինա-Դարձեալ շնորհակալութիւն կը յայտնենք ձեզի՝ ձեր սպառնիչ պատասխաններուն եւ ջերմ ընդունելութեան համար:

Ռ.Գ.-Բարի Եկած էք, Ռատիօ Երազ, մեր փափաքն է, որ ապագային լաւ լրագրողներ ըլլաք եւ մեզի հետ աշխատակցիք:

Հարցազրոյցը արտագրեց Մարինա Քէշիշեան

ԱՅՁ. ԶԱՐԷՆ ԵՓՓԷ...

Սկիզբ՝ էջ 1

եան նիւթական օժանդակութեամբ:

Յուցադրուեցաւ տեսերիզ մը, որ կը ներկայացնէր ճեմարանին պատերազմի տարիներուն հրթիռակոծումներուն եւ ռմբակոծումներուն հետեւանքով կրած վնասները, աշակերտներուն ձեռամբ կատարուած վարժարանի առաջին մաքրութիւնը Զալէպի ազատագրումէն ետք, ապա նաեւ վերանորոգութեան աշխատանքներուն ընթացքն ու վերաշխուժացումը:

Այս առիթով տնօրէնը շնորհակալութեան խօսք ուղղեց Բարիթաս Բոլանտ Զաստատութեան, տարրալուծարաններու նորոգութեան եւ կահաւորման իր նիւթական աջակցութեան համար, ՍՕԽ-ին համակարգիչներու ապահովման համար, ինչպէս նաեւ Շրջնաւարտից Միութեան, յատկապէս 1988-ի շրջանաւարտներուն նիւթական օժանդակութեան համար: Տնօրէնը յատուկ շնորհակալութեան խօսք ուղղեց նաեւ ճեմարանի ինսամակալութեան անդամներուն, որոնք աջակցութիւն տրուեցան նիւթական օժանդակութեան համար: Տնօրէնը յատուկ շնորհակալութեան խօսք ուղղեց նաեւ ճեմարանի ինսամակալութեան անդամներուն, որոնք աջակցութիւն տրուեցան նիւթական օժանդակութեան համար: Տնօրէնը յատուկ շնորհակալութեան խօսք ուղղեց նաեւ ճեմարանի ինսամակալութեան անդամներուն, որոնք աջակցութիւն տրուեցան նիւթական օժանդակութեան համար:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ...

Սկիզբ՝ էջ 3

- Մեր գաղութներուն, որոնք փոխանակ հեռուէն միայն դիտելու ու մտահոգուելու, նիւթապէս օժանդակեն Լիբանանի հայութեան կարիքներուն:

Վեհափառը աւարտին յայտարարեց:

Կաթողիկոսարանը հարիւր միլիոն լիբանանեան ոսկի կը դնէ Լիբանանի Ազգային առաջնորդարանի տրամադրութեան տակ, որպէս անմիջական օժանդակութիւն՝ յատկացուելու համար մեր կարիքաւոր ընտանիքներուն:

«Արարատ», «Ազդակ» եւ «Չարթօնք» թերթերուն կը յատկացնէ տասական միլիոն լիբանանեան ոսկի՝ առ ի գնահատանք ու գորակցութիւն իրենց կատարած աշխատանքներուն:

Այնուհետեւ խօսք առաւ ճեմարանի ինսամակալութեան ատենապետ Տիգրան Պետրոսեան, որ շնորհակալութիւն յայտնելով բոլոր նուիրատուներուն եւ բացման արարողութեան մասնակցողներուն յայտնեց, որ այս փուլը ճեմարանի վերանորոգութեան առաջին փուլն է, աշխատանքը պիտի շարունակուի:

Աւարտին ներկաները ուղղութեամբ «Չարթօնք» սրահ, ուր այս առիթով խօսք առաւ Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդը, որ նախ շնորհակալութիւն յայտնեց նուիրատուներուն, ապա շնորհակարտելով ճեմարանականները դիտել տուաւ, որ վերանորոգման այս աշխատանքը երկու պատգամ կ'ընդգրկէ, առաջինը ներքին - հայկական լսարանը իրազեկ դարձնելու նուիրատուութիւններու շնորհիւ հեզասահ ընթացող վերանորոգման աշխատանքներուն, հաւաքական աշխատանքով յաղթահարելու երկրին ու ժողովուրդին դիմագրուած դժուարութիւնները, երկրորդը՝ արտաքին աշխարհին ցոյց տալու, որ Սուրիան կը վերականգնի եւ կը վերամրագրէ իր դերն ու դիրքը:

Աւարտելով իր խօսքը, սրբազան հայրը մաղթեց, որ ճեմարանը միշտ հզօր մնայ, ապա օրհնելով կառուցը՝ յարատեւ վերելք մաղթեց ճեմարանին:

ՀՀ ԿՊՄՄ ՆԱԽԱՐԱՐԻՆ...

Սկիզբ՝ էջ 3

Նելլէ ետք, ոստիկանները բռնի ուժով ցուցարարները քաշեցին դէպի ոստիկանական մեքենաներ եւ տեղափոխուեցան ոստիկանութեան կէտրոնի ու Երեբունիի բաժիններ: Ընդհանուր առմամբ բաժիններ տեղափոխուեցան 24 երիտասարդներ: Յուցարարներէն մէկը ըսաւ. «Ոստիկանութիւնը կը ծառայէ ոչ թէ ժողովուրդին, այլ օրուան իշխանութեան. ոչինչ փոխուած է՝ նոյն անյարգալից վերաբերմունքը, կը կըրկնուին նոյն բռնութիւնները, նոյն միջոցները, գործ նախկինները կը կիրարկէին քաղաքացիին հանդէպ:

ՀՀ ԿԵՄ Կեդրոնական Վարչութեան անդամ Զրիստինէ Վարդանեան կոչ ուղղեց Արայիկ Յարութիւնեանին հրաժարական տալու:

Բերման ենթարկուելէ երեք ժամ ետք, երիտասարդները ազատ արձակուեցան:

ԳՐՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺ...

Սկիզբ՝ էջ 16

մշակութային տեսիլքին իրականացմամբ է որ աշխարհի բոլոր ծայրամասերուն մէջ, աւելի քան 90 տարի գործեց եւ կը գործէ Զամագայիկը: Առ այդ՝ որպէս երախտագիտական եւ յարգանքի արտայայտութիւն, Զամագայիկի Զալէպի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի Վարչութիւնը, օժանդակութեամբ մասնաճիւղի Գրական, Երաժշտական եւ Պարարուեստի յանձնախումբերուն, կազմակերպեց Լեւոն Շանթի ծննդեան 150-ամեակի յորելնական հանդիսութիւնը՝ ողբերգելու հայ մտաւորական ու Զամագայիկի հիմնադիրը:

Բացման խօսքէն ետք հանդիսավարները ընթերցեցին Լեւոն Շանթէն մտորումներ, ապա օրուան բանախօսին՝ տիկին Լալա Միսկարեան-Միլասեանի հակիրճ կենսագրականը ներկայացուցին:

Բանախօսը, վկայակոչելով Շանթի աշակերտներուն եւ ժամանակակիցներուն յուշերը, ներկայացուց Լեւոն Շանթ մարդն ու գրողը, մանկավարժն ու փիլիսոփան: Ապա մեքենայով Շանթէն «վեր» եւ «Ես Պատրանքը Սիրեցի» քերթուածները դիտել տուաւ, որ Շանթ միշտ ձգտած է մտքով ու հոգիով բարձրանալ դէպի վեր, դէպի ոգեղէն գուլալ աշխարհի ու յաճախ այդ բարձունքին իսկ մէջ մինակ մնացած, աւելցնելով որ բարձրութեան մէջ առանձին մնալու միտքը մէկէ աւելի գրողներ լուսարձակի տակ առած են, որովհետեւ անոնք գերծ մնացած են մարդկային նեղ ու սահմանափակ տենչերէն ու թախք առած են դէպի աւելի լայն հորիզոններ: Ապա անդարձաւ Շանթի ազգային քաղաքական գործունեութեան շեշտելով անոր մտքի ու հոգիի քիւրեղեայ մաքրութիւնն ու նուիրութիւնը:

Ունկնդիրը ծանօթացաւ նաեւ Շանթ մանկավարժին, տեսաբանին եւ նուիրեալ ուսուցիչին:

Ամփոփելով իր խօսքը բանախօսը սեղմ գիծերով բնութագրեց Շանթի ստեղծագործութեան արժեքը, դիտել տալով որ ան հայ գրա-

կանութիւնը հասցուցած է միջազգային մակարդակի:

Այնուհետեւ Զամագայիկի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի երաժշտական յանձնախումբէն բժիշկ Պերճ Գասապեան ապրումով մեներգեց Լեւոն Շանթի երգի վերածուած միակ բանաստեղծութիւնը՝ «Անուշ Զովիկ»ը: Բանաստեղծութեան տպագրուած տողերը բաժնուեցան հանդիսատեսներուն:

Երգին յաջորդեց Նրբաճաշակ պարային ներկայացում մը եւ ասմունք:

Զամագայիկի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի անդամուհիներէն Անի Գրատեան եւ Մելինէ Պեգճեան յուզումնախառն ապրումներով ասմունքեցին Լեւոն Շանթի «Հին Աստուածներ» թատերգութենէն քաղուած «Իջեք Երազներ» քերթուածը, որուն ընթացքին Զամագայիկի «Շուշի» պարարուեստի դպրոցէն քանի մը աշակերտուհիներ, պարիկներու նման, դիւթիչ երաժշտութեան ընկերակցութեամբ, հեզաճկուն պար մը պարեցին:

Այնուհետեւ պաստառի վրայ ցուցադրուեցաւ Լեւոն Շանթի «Եսի Մարդը» թատերգութենէն պատկերներ, որուն կենդանի ներկայացումը Զալէպի մէջ վերջերս կատարած էին Զամագայիկի «Լեւոն Շանթ» թատերական միաւորի անդամները:

Յայտագիրի աւարտին, Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդի ներկայացուցիչ Տէր Մանուկ Աբեղայ Պարիխանեան եւ Զամագայիկի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի Վարչութեան ատենապետուհի Ռոզէթ Ապեճեան շնորհակալական ծաղկեփունջով եւ փոքր յուշանուէրով մը պատուեցին օրուան բանախօսը՝ տիկին Լալա Միսկարեան-Միլասեանը, որմէ ետք հայր սուրբը ներկաներուն փոխանցեց առաջնորդ Սրբազան հօր գնահատանքը եւ Լեւոն Շանթը համարեց «Դպրոց» մը, որուն պէտք է հետեւին նորահաս սերունդները՝ Շանթի գործերը ընթերցելով եւ ծանօթանալով անոր ստեղծագործութիւններուն:

Ձեռնարկը փակուեցաւ «Պահպանիչ» աղօթքով:

ՍՕԽ-Ի...

Սկիզբ՝ էջ 16

մինչեւ մեր օրերը, պահպանելով ազգային ինքնատկութիւնը եւ առանձնայատկութիւնը: Տիգրանակերտի տոհմիկ սովորութիւններն ու անախորհիւնները ներկայացուց տիկին Մարինա Սագայեան-Թիֆլեքճեան, որ հաճելի մթնոլորտ մը ստեղծեց Տիգրանակերտի բառբառով մեքենայներ կատարելով:

Աւարտին խօսք առաւ Բերիոյ Զայոց Թեմի Բարեչախ Առաջնորդը, որ կարեւոր համարեց հայկական աստղագործութեան պահպանումն ու տարածումը եւ բարձրորէն գնահատեց ինչպէս նաեւ հայկական կը պահպանեն հայկական աստղագործութիւնը եւ տարբեր առիթներով կը ներկայացնեն գայն մեր ժողովուրդին: Գերշ. Տէր Մասիս ըսաւ, որ ազգ մը

կը գոյատեւէ իր արժեքներով եւ մշակոյթով, ուստի ՍՕ Խաչը այս ցուցահանդեսով կը պահպանէ հայ կնոջ ստեղծագործ մտքին եւ ճարտար ձեռքին հմտութեամբ ստեղծուած արուեստը:

Սրբազան հայրը Նոր տարուան շեմին յաջողութիւն մաղթեց ՍՕ Խաչի ծրագրած բոլոր ձեռնարկներուն եւ բարի ամանոր մաղթեց բոլորին:

Յուցահանդեսին ներկայացուեցան հայկական աստղագործութենէն օրինակներ, որոնք յատուկ էին Ուրֆայի, Տիգրանակերտի, Այլթեպի, Մարաշի, Քիլիսի, Սվազի եւ այլ գաւառներու, ինչպէս նաեւ Կաղանդի յատուկ ծածկոցներ, անձեռոցներ, գարդեղներ եւ «Փեթակ» խոհանոցի պատրաստած հայկական ուտեստներու ճոխ տեսականին:

Յուցահանդեսը ներկայացուած էր ճաշակաւոր եւ բժայնդիր յարուստով:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ
ՅԱԿՈՒ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

Մահուան Ա. տարելիցին եւ իր տիկնոջ՝
ՀԱՆԳՈՒՅԵԱԼ
ՄԱՐԻՔԱ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
(Ծնեալ՝ ԿՈՍՏԱՆԵԱՆ)

Մահուան քառասունքին հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 8 Դեկտեմբեր 2019-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Վիլլաներ - Զալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:

ՄՏԱՄԱՐԶԱՆՔ



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 323)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Յորիգոնական

- 1- Լայն կոնակ ունեցող: Պատճառել, ազդել:
- 2- Ձայնաւոր տառեր: Հակառակ՝ յարաբերական դերանուն: Ձայնահիշ:
- 3- Սարգիս Օհանջանեանի ծածկանունը: Խօսք:
- 4- Իրարայաջորդ տառեր:
- 5- Կենցաղ: Ձայնաւոր տառեր:
- 6- Ս. Պատարագի բաժակ: Խառնատառ՝ պաղիլ:
- 7- Հակառակ՝ տառի մը անունը: Հակառակ՝ վիճելի խնդիր:
- 8- 1906-ին Թիֆլիսի «Յառաջ» թերթին մէջ լոյս տեսած հետեւեալ խօսքի հեղինակին մականունը. «Մեր ուղղութիւնը պարզ էր, ծառայել մեր ժողովրդին, թեթեւացնել նրա կրած ծանր բեռը, բանալ նրա աչքերը, կռուիլ նրա կեղեքողների, խաբողների դէմ: Սակայն կեանքի հրապոյրները մեծ էին, իսկ ազատութեան ճանապարհը փշոտ...»: Գրաբար՝ օր:
- 9- Մարմինը մէջքէն վեր՝ առանց թելերուն եւ գլուխին: Հակառակ՝ կառուցիլ:
- 10- Սոխրագոյն:
- 11- Վրիժառու:
- 12- Ազգային-ազատագրական պայքարի հերոս՝ Թաթուլ Կրպեանի նահատակուած վայրը: Փոքրացնող մասնիկ:

Ուղղահայեաց

- 1- Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 1892-ին գումարուած Ա. Ընդի ժողովին վայրը: Սուր ձայն:
- 2- Տարածքի միաւոր: 3005:
- 3- Չօրաւոր: 7001: Հակառակ՝ իրարայաջորդ տառեր:
- 4- Հակառակ՝ ծովի աւազակ: Սարսափ: Անձնական դերանուն: Ձայնաւոր տառեր:
- 5- Տղամարդ: 24 ժամ: Հակառակ՝ 511:
- 6- Տառի մը անունը: Թարթել: Տառի մը անունը:
- 7- Ձայնաւոր տառեր: Կրկնուած բաղաձայններ:
- 8- Արական անուն: Հակառակ՝ 5400:
- 9- ՀՀԳ-ի հիմնադիր երրորդութեան կրտսերագոյնը: Պոչ:
- 10- ՀՀԳ-ի հիմնադիրներէն, որ իր ժամանակակիցներուն եւ գաղափարի ընկերներուն կողմէ կոչուած է «Մարդակերտ»:
- 11- Բայական լծորդութիւն: Աղէկ:
- 12- Զոյ: ՀՀԳ-ի պաշտօնաթերթը:



Պատրաստեց Մարինա Զիւլբոյեան-Պօղիկեան
ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 322)

Տեղաւորէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

	8		3	1			7	
	3				9		6	
				8	4			5
								6
2			9	5	8			4
5								
4			7	2				
	7		8				4	
	6				1		8	

ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 93)

Պարոյր Սեւակի բանաստեղծութիւնները նշանակելով գտէ՛ք պահուած բառը:
Պահուած բառը 13 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Սեւակի բանաստեղծութիւններէն մէկը (երկու բառ):

ն	ա	ն	ն	ւ	ն	ը	ք	ն	ց
ն	ք	դ	ն	ւ	ք	ն	ն	հ	տ
ձ	ն	ք	ե	թ	է	կ	ք	ա	ե
մ	ե	ա	ն	օ	ք	ա	ե	յ	ս
դ	օ	ռ	մ	ւ	պ	ծ	ա	ա	ն
օ	ձ	ք	ք	ա	թ	ն	յ	ս	ւ
դ	ա	ի	ն	ե	կ	ե	ք	տ	թ
ա	դ	ա	ւ	օ	ք	ք	ա	ա	ի
ն	ճ	ի	ե	ն	թ	ը	ք	ն	ւ
ջ	ա	ս	ե	մ	ը	թ	ի	ք	ն

«Հայաստան», «Ընկածները», «Յտեսութիւն», «Ղօղանջ Որբութեան», «Սօր Ձեռքերը», «Բարի Ճանապարհ», «Ըն Անունը», «Խենթը», «Նամակ», «Ձիւնը», «Դու», «Եթէ Ասեմ»

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 322)

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 321)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	h	n	v	u	n	u	n	u	h	n	j
2	ե	գ	ք	պ	պ	ի	ն	ք	2	ա	
3	ք	դ	ա	ա	ա	ք	ա	ք	ն		
4	ձ	ն	ք	ա					տ	է	գ
5	ա	վ	ն	հ		ա	յ	ն			
6	կ	հ	լ	ն	ն	ւ	թ	ի	ւ	ն	ը
7		լ	ւ	ւ	ա	ք	է	ն			
8	ա	պ	ա	ք	ա	ն	ք	չ	հ	չ	
9	ք	ա	ա	տ	ա	ւ	է	դ	ա		
10	ն	ք	ն	տ	ն	ւ	մ	ի	ծ	է	ս
11	ւ	ի	մ	կ	ա	ն			ք	է	
12	ս	կ	ի	հ	ա	կ	ա	ք		ք	

3	7	5	2	9	1	8	4	6
9	8	4	3	7	6	1	2	5
2	6	1	5	8	4	9	7	3
8	1	6	7	4	5	2	3	9
4	3	7	8	2	9	5	6	1
5	9	2	1	6	3	4	8	7
7	5	3	4	1	2	6	9	8
6	2	8	9	5	7	3	1	4
1	4	9	6	3	8	7	5	2

ՊԱՅՈՒԱԾ ԲԱՌ (ՄՊ 92)

Պահուած բառը՝ «Անկախութիւն Հայկական»

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ



Հին աշխատանքներու արդիւնքը պիտի քաղէք: Ձեր գործերը պիտի բարգաւաճին: Բախտը ձեր կողքին է: Մի՛ հակառակիք այս օրերուն, ձեր առողջութեան հոգ տարէք:

ՅՈՒԼ



Կառչած մի՛ մնաք ձեր կարծիքին: Ոչ ճշգրիտ տեղեկութիւններ պիտի ստանաք: Այս օրերուն պիտի նախընտրէք միտակ մնալ, հեռու՝ ձայներէ ու մարդոցմէ:

ԵՐԿՈՒՐԵԱԿ



Թոյլ մի՛ տաք, որ պայմանները տկարացնեն ձեր կամքը: Դուք կրնաք յաղթահարել դժուարութիւնները: Ծամբորդելու առիթ պիտի տրուի ձեզի:

ԽԵՅՁԵՏԻՆ



Այս օրերուն պիտի ծանձրանաք եւ յուսահատիք: Ստիպուած՝ պիտի համակերպիք ձեր ընկերներուն եւ միջավայրին:

ԱՌԻԾ



Ձեր ստեղծագործ կարողութիւնները պիտի գօրանան: Ուշադրութեան առարկայ պիտի դառնաք ձեր քաղաքական գաղափարներուն համար:

ԿՈՅՍ



Ձեր նեղ կացութեան մէջ ձեր ընկերները ձեռք պիտի երկարեն ձեզի եւ օգտակար պիտի դառնան: Ձեր սեփական կարծիքը մի՛ տաք, վատ կացութեան նկատմամբ:

ԿԵՒՈՔ



Վերատեսութեան պիտի ենթարկէք ձեր նիւթական հաշիւները: Ձեր ցանկութիւններէն մէկը պիտի իրականացնէք: Լաւ լսեցէք ձեր ծնողներուն խրատները:

ԿԱՐԻՃ



Պիտի օգտուիք անակնկալ պատահած երեւոյթներէ: Լուսինը ձեր աստղին մէջն է: Պիտի յաջողիք հարց մը լուծել եւ դրական փոփոխութիւն մը արձանագրել:

ԱՂԵՂՆԱՌՐ



Նուր մը կամ բարի լուր մը պիտի ստանաք: Վերապահ եղէք: Նուրը շրջան մըն է: Իրապաշտ եղէք ձեր հարցերու լուծման մէջ:

ԱՅԾԵՂԶԻՐ



Նոր ու դժուար պարտականութիւն մը պիտի ստանձնէք: Ձեր դիմաց ծագած բոլոր հարցերը ինքնավստահութեամբ պիտի յաջողիք լուծել:

ԾՈՎԱԼՈՒՇ




Ձեր ամբողջ ուժով եւ ինքնավստահութեամբ պիտի դիմադրէք ամեն հակառակորդի: Ձեր ընկերները ձեր կողքին պիտի կանգնին:

ՁՈՒԿ



Մի՛ պարտադրէք ձեր կամքը բոլորին: Այս օրերուն պիտի ունենաք բախտ, սեր եւ լաւ յարաբերութիւններ: Ուրախ լուր մը պիտի ստանաք եւ յաջողութիւն մը պիտի արձանագրէք:



Սոնա Տէր Պողոսեան-Տարաքճեան

ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս.ԾՆՈՒՆԴ

Նոր Տարին 1 Յունուարին տօնելու սովորոյթը հաստատուած է Յուլիոս կեսարի կողմէ: Ժ2 դարուն ամբողջ եւրոպական աշխարհը ընդունած է 1 Յունուարը որպէս Նոր Տարի: Իսկ հետաւեալ հայութեան մօտ, Նաւասարդը՝ Նոր Տարին կը գուգարի պէր Օգոստոս ամսուան սկիզբը, տօնախմբութիւնը կը կատարուէր Բագրեւանդ գաւառին մէջ, Անահիտի եւ Արամազդի կիսանդրիներուն շուրջ:

Քրիստոնէութեան ընդունումէն ետք, 1650-ական թուականին հայութիւնը սովորութիւն դարձուց 1 Յունուարը որպէս Նոր Տարի տօնելը:

Նոր Տարուան օրը, մանկանալու ցանկութիւն կը ծնի մարդոց մէջ: Մանկանալ՝ գագացումներով, բարի գործերով, ներողամտութեան ոգիով, շրջապատին եւ մարդկութեան հետ եղբայրանալու օրինակով: Ապրած տարուան հաշուեփակն ալ կը կատարեն յաճախ:

301-ին Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը պաշտօնապէս պետական կրօնը ընդունուեցաւ: Բայց այդ թուականէն առաջ քրիստոնէաներ կային Հայաստանի մէջ եւ առաքելներ քրիստոնէութիւնը կը քարոզէին արդէն: Պատմութիւնը արձանագրած է բազմաթիւ մարտիրոսներ՝ Իշխանուհի Ս.Սանդուխտ, Արքայական Իշխանուհի Չարմանդուխտ Տիրուհի, Ս.Սամուէլ, Ս.Հռիփսիմէ, Ս.Գայանէ եւ Ս.Շողակաթ:

Ասոնց կողքին մարտիրոսացան Ս. Բարթողոմէոս եւ Ս.Թադէոս առաքելները:

Այս մարտիրոսները կը փաստեն, որ քրիստոնէութիւնը գոյութիւն ունեցած է 301 թուականէն առաջ:

301 թուականին Ս. Գրիգոր Լուսաւորիչի ջանքերով Հայաստան դարձաւ աշխարհի առաջին քրիստոնէայ պետութիւնը:



Սուրբ Ծնունդի առաջին տօնակատարութիւնը տեղի ունեցած է 336 թուականի Դեկտեմբեր 25-ին, Հռոմի մէջ: Իսկ Քրիստոնէական առաջին պաշտօնական տօնը արձանագրուած է Յունուար 6-ին, 361 թուականին եւ եղած է Աստուածայայտնութեան (Epiphany) տօնը:

451 թուականին, Զաղեղոսի մէջ գումարուած քրիստոնէական եկեղեցիներու 4-րդ տիեզերական ժողովին, Սուրբ Ծնունդը Դեկտեմբեր 25-ին տօնելու Հռոմեական կայսերական պահանջը երկփեղկում յառաջացուց:

Թերեւս փակագիծ բացող մանրամասնութիւն է, այսուհանդերձ անտեսել կարելի չէ այն պատմական փաստը, որ ատենին՝ Դեկտեմբեր 25-ին, հռոմեացիք կը տօնէին իրենց Արեւի աստուծոյ տօնը եւ կայսերական Հռոմը, Քրիստոնէութեան պետական կրօն հռչակումը իր հպատակներուն ընդունելի դարձնելու համար, քաղաքական առանձնայատուկ պատճառներ ունէր պնդելու Սուրբ Ծնունդը Դեկտեմբեր 25-ին տօնելու իր պահանջին վրայ:

Ամեն պարագայի, Զաղեղոսի ժողովին, Արեւելեան եկեղեցիները կառչած մնացին Աստուածայայտնութեան եւ Քրիստոսի Մկրտութեան տօները միացնելու եւ միեւնոյն օրը՝ Յունուար 6-ին Սուրբ Ծնունդը տօնելու իրենց ավանդութեան:

Այդ թուականէն ասդին, հայ ժողովուրդը կը շարունակէ հաւատարիմ մնալ Սուրբ Ծնունդը Յունուար վեցին տօնելու իր ավանդութեան, մասնաւորապէս, ըստ մեր պատմաբաններուն, Տրդատ թագաւորը եւ պաշտօնապէս առաջինը քրիստոնէութիւն ընդունած այլ անձեր Գրիգոր Լուսաւորիչի կողմէ, Բագաւանի մէջ, Քրիստոնէայ մկրտուեցան ճիշդ Աստուածայայտնութեան օրը:



303 թուականին Ս. Գրիգոր Լուսաւորիչ նախկին հեթանոսական տաճարին տեղ Էջմիածինի տաճարը կառուցեց:

Հայ առաքելական եկեղեցին Յիսուս Քրիստոսի ծնունդը եւ Յայտնութիւնը կը տօնէ 6 Յունուարին, հաւատարիմ մնալով իր ավանդութեան:

Հանրագիտական տեղեկանքի համաձայն, 200 թուականին, Կղեմէս Աղեքսանդրիացին

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԵՏԵԵԼՈՎ...

Սկզբը՝ էջ 9

Վարուժան շատ գոհ էր գալուստի իր միջավայրից: Կը գիտակցեր անշուշտ, որ այս միջավայրը ապերախտ է գրականության հանդեպ: Գալուստական հորիզոնը, առհասարակ, նեղ կու գար այլևս իր մտքի թելածուկներում: Յետոյ, շահութաբեր ասպարեզ ալ չկար իրեն համար, մինչ ինք արդեն ուներ ընտանեկան հոգեր ու պատասխանատուություններ: Նիւթական անձկությունը կը նեղեր զինք: Հակառակ այս տրտուներին, ան շրջան մը ես տեսնեցի գալուստի մէջ: 1911-ի աշնան ընտանեաց տեղափոխուեցաւ Թոքատ (Եւրոպիա), իբրև տեղույն Ազգ. Ճեմարանի ուսուցիչ: Այս տեղափոխությունը իրականացաւ հրաւերովը տեղույն նորընտիր առաջնորդ՝ արմաշական Եւսեպոս Ժ. վրդ. Սահակեանի (իրեն նման՝ հետագային Մեծ Եղեռնի նահատակ), որ կ'ուզէր գարկ տալ իր թեմին կրթական կեանքին: Վարուժան այստեղ մնաց լոկ տարի մը:

Ահա այսպէս, Վարուժան ընդամենը երեք տարի գալուստ մնաց, զբաղելով ուսուցչութեամբ:

Հարցումը անտեղի չէ բնաւ.

- Ի՞նչ տուաւ գալուստը իրեն:

Երեք բան:

ա) Նոր ներշնչումներ: Գալուստը իր հոգին բացաւ նոր տեսիլներու: Ինք գիտի ծնունդ էր, եւ իր մանկութեան անշնչեղ տպաւորությունները վերաթարմացան. իր բանաստեղծ հոգին հոգին ընդերքին մէջ սկսաւ տեսնել ու գտնել նոր գեղեցկություններ: Պահ մը մոռցաւ քաղաքի կեանքը, անձնատուր եղաւ բնութեան, պեղեց անոր գաղտնիքները...: Այս շրջանին է որ ճանչցաւ հոգին ու աշխատանքին գեղեցկությունը, հոգին ողորդեց նոր խորհուրդներով, եւ այդ բոլորով՝ ստեղծեց իր «**Հացին երգը**»:

բ) Կեանքի ընկեր մը՝ Արաքսին:

գ) Երկու սիրասուն գալուստներ (երրորդը պիտի ծներ իր սպանութենէն ետք...):

(Շարունակելի - 5)

Հայ Մատիւլ...

Սկզբը՝ էջ 15

Նոր Հայաստանը կեանքի կոչած մեր ժողովուրդի թաւշեայ յեղափոխութենէն ասդին, ծայր աստիճան բեւեռացուած՝ քաղաքականացուած ու «կուսակցականացուած» է հայաշխարհը: Հակամարտ ու թշնամական ճամբարներու շուրջ առաջացած անվստահութեան ճահիճը իր թունաւոր մթնոլորտով վարակած է, առաջին հերթին, հայ մամուլն ու գաղութային լրատուամիջոցները, որոնք ըստ իրենց կոչումին եւ առաքելութեան՝ արթուն պա-

հակներն են ու այդպիսին պետք է մնան հայ քաղաքական միտքի բոլոր ոգորումներուն ընթացքին, բոլոր ժամանակներուն եւ յատկապէս պատմութիւն կերտող այս օրերուն:

ՅՈՒՐԵԼԻՆԱԿԱՆ...

Սկզբը՝ էջ 8

Խօսութիւնը՝ Փարիզի մէջ, որուն մտայնացումը կատարած է Կոմիտասը մարմնաւորած էր Տեր Կոմիտաս Բիւլ. Տատաղեան: Արշակ Զոպանեան կը համոզէր Կոմիտաս վարդապետը, որ չվերադառնայ Պոլիս, այլ մնայ Փարիզ, որովհետեւ այնտեղ թե՛ ինք կ'առնէ անոր տաղանդը: Կոմիտաս վարդապետը, սակայն, կը պնդէր, որ պիտի մեկնի իր երկիրը, իր ժողովուրդին ծառայելու, հայրենի լեռներուն բոլոր շնչելու:

Կոմիտասեան երգերու շունչով հանդիսութիւնը գունաւորեց «Գառնի» պարախումբը՝ ներկայացնելով «Վաղարշապատի Պար», «Նազան Եար» եւ «Շողեր Ջան» պարերը, գեղ. դեկավարութեամբ Վրեժ եւ Նանոր Թերգեաններու:

Ապա հանդես եկաւ Հայ Կաթողիկէ Համայնքի «Ալեմշահ» երգչախումբը, յաջորդաբար ներկայացնելով «Քրիստոս Ի Մէջ», «Օրինեալ Է Աստուած», «Ով Մեծասքանչ Դու Լեզու» եւ «Շողեր Ջան» կտորները, խմբավարութեամբ տիկ. Մարգրիտ Խաչատուրեան-Պանտակի, դաշնամուրի ընկերակցութեամբ Ռաֆֆի Պալեանի:

Գոհունակութեան փակման խօսք արտասանեց Արիի. Տեր. Պետրոս. Արք. Միրիաթեան, որ վերառաւ Կոմիտասին արժեքը ըսելով. «Կոմիտասը մերն է, որովհետեւ կը պատկանի մեր բոլորին, Հայաստանէն մինչեւ Սփիւռք, մինչեւ հեռաւոր աշխարհ, ուր մէկ հայ իսկ կայ: Կոմիտասը կը պատկանի Հայաստանեաց եկեղեցիին իր շարականերով, աղօթքներով, երգերով: Կոմիտասը մերն է, որովհետեւ կը պատկանի հայ մշակոյթին: Կոմիտասը մեր երաժշտութեան Մարոյ Աշտուղէն է»: Ապա Գերապայ ծառ տերը գնահատեց կազմակերպիչ յանձնախումբը, որպէս օրինութիւն պատուեց Տեր Կոմիտաս Բիւլ. Տատաղեանը՝ հայկական ձեռագործ խաչ մը նուիրելով անոր:

Աւարտին ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակիցներուն: Հանդիսութիւնը փակուեցաւ «Հայր Մեր»-ով եւ «Պահպանիչ» աղօթքով:

ԱՐԵՎԵԼՔԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ(1)...

Սկզբը՝ էջ 8

Վերջին բանն է այդ, որ կրնանք երբեւիցէ անցընել մեր միտքէն: Երբեք պիտի չհակառակելիք, որ արեւմտահայերէնը հարստանար

ի հաշիւ արեւելահայերէնի լեզուական ազնիւ տարրերուն, յատկապէս անոնց, որոնք համարժեքը չունին մեր բարբառը: Մեր թիրախը այն օտարամուտ աղբն է, որ կ'ապականէ նախ արեւելահայերէնը եւ անկէ ալ աժան ու հեշտ կ'արտածուի արեւմտահայերէնին, ուր ընդհանրապէս կը յաջողի գտնել զինք գրկաբաց ընդունողներ՝ իբրև լեզուական նորագոյն ու ընտրելագոյն նորաբանութիւն:

ԹԻՔԱԿԱՆ...

Սկզբը՝ էջ 4

որ, ըստ Լինչի, յայտնի դարձաւ Ալպայրաքի ելեկտրոնային փոսթը կոտրելէ ետք:

Չարմանալի չէ, որ Հետաքննություններու Դաշնակցային Բիւրոն (ԴԲԲ) կը քննէր TASC-ի պաշտօնեաները: «8 Մեպտեմբեր 2016 թուակիր ելեկտրոնային նամակին մէջ TASC-ի համահիմնադիր Իպրահիմ Ույար ըսած է Ալպայրաքի, որ ԴԲԲ իրեն հարցուցած է, թէ արդեօք TASC եւ թրքական այլ կազմակերպություններ ներգրաւուած են թրքական կառավարութեան անունով ամերիկեան քաղաքականութեան մէջ միջամտելու փորձերուն: Ույար նաեւ նշած է, որ հարցաքննուած են քանի մը այլ անձեր, որոնց շարքին՝ Կուզէլ եւ Թրքական ժառանգութեան կազմակերպութեան հիմնադիր Նախագահ Հալիլ Տանիշմազ»: Տարիներ առաջ Ալպայրաքին ուղարկուած ելեկտրոնային նամակներու մէջ, Տանիշմազ անգամ մը առաջարկած էր «քողարկուած» լոպիստական քաղաքականութեան իրականացնելը՝ «Ամերիկայի մէջ լոպիստական գործունեությունը սահմանափակող ֆինանսաւորման կանոնները եւ հարկային խոչընդոտները յաղթահարելու համար»: Երբ ելեկտրոնային նամակները բացայայտուեցան, Տանիշմազ հեռացաւ Թրքական ժառանգութեան կազմակերպութենէն, հաղորդած է

Լինչ:

Turkish Coalition Northeast PAC եւս գումար նուիրած է ծերակուտական Կրեհեմի քարոզարշաւին: Այս տարուան Ապրիլին ընկերութիւնը առաւելագոյն թոյլատրելի գումարը՝ 5000 տոլարի նուիրատուութիւն ըրաւ Team Graham-ի «անոր ամենամեծ նուէրը թեկնածուի յանձնաժողովին, ներկայի ընտրական փուլին», պարգած է Լինչ:

Երբ ծերակուտական Կրեհեմը Միւնիխի մէջ կայացած համաժողովի ընթացքին իր ելոյթին մէջ սատարեց Թուրքիոյ, Team Graham 1000 տոլար ստացաւ ամերիկեան Greenberg Traurig, LLP լոպիստական ընկերութենէն, զոր կը վարժէ Թուրքիան:

Ծերակուտական Կրեհեմ 10 Յունուար 2019-ին հանդիպեցաւ Greenberg Traurig լոպիստներուն՝ Թուրքիա կատարած իր այցելութենէն շաբաթ մը առաջ. Հոն ան պիտի հանդիպէր Երտողանի: Թուրքիա գտնուելու ընթացքին Երտողան ծերակուտական Կրեհեմը իրաւորեց հետը համերգի երթալ, բան մը, զոր Կրեհեմ որակեց իբրև «իր կեանքի լաւագոյն իրադարձություններէն մէկը»:

Լինչ եզրափակած է իր գեղոյցը՝ պնդելով «Պարզ է, որ թրքական կազմակերպություններու եւ քաղաքական գործողություններու յանձնաժողովներու համախմբուած ցանցը, որ կապեր ունի Երտողանի ընտանիքին հետ, կը կարծէ, թէ Կրեհեմ արժանի է իրենց ժամանակի եւ քաղաքական նուիրատուութիւններու ներդրման»:

Մենք չենք գիտեր 2016-ին կատարուած ԴԲԲ-ի հետաքննութեան արդիւնքը TASC-ի եւ թուրք-ամերիկեան այլ կազմակերպություններու վերաբերեալ, այսուամենայնիւ, կարծես թէ բաւարար հիմքեր կան ուսումնասիրելու համար անոնց կողմէ «Օտարերկրեայ գործակալներու արձանագրութեան մասին» օրենքի հնարաւոր խախտումը՝ իբրև չարձանագրուած լոպիստներ, օտարերկրեայ կառավարութեան համար...

«ԳԱՆՁԱՍԱՐ»
ՊԱՇՏՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Չարմիկ Զիլմբեշեան-Պողոսեան
Սրբագրիչներ՝ Չեփիւ Պապիկեան-Աւագեան
Յուշիկ Ղազարեան
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան
Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլմբեշեան
Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցությունները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարությունները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:



Ռաֆֆի Միլահեան

ՏԵՂԱԿԱՆ

Լուրեր Սուրիոյ Մարզական Կեանքէն

- Միջազգային ֆութպոլի դասաւորման Նոյեմբեր ամսուան հրապարակուած ընդհանուր աղիւսակին մէջ, Սուրիոյ հաւաքականը չորս աստիճան բարձրանալով գրաւեց 79-րդ հորիզոնականը: Կազմը Ասիոյ երկիրներու 11-րդ, իսկ արաբ երկիրներու 8-րդ դիրքը գրաւեց:



- Սուրիոյ ֆութպոլի ախոյեանութեան 7-րդ փուլի մրցումներուն, Իթթիհատ 4 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆթունէն, իսկ Դամասկոսի Ուստուն 1 - 0 արդիւնքով յաղթեց Զըթթինին: Մնացեալ խումբերը հետեւեալ արդիւնքը արձանագրեցին՝ Թիշրին - Թալիհա 1 - 0, Ուսասպէ - Ճեզիրէ 2 - 0, Նաուաիր - Սահէլ 4 - 0, Զարամէ - Ճապլէ 2 - 0, ՃէյՅ - Շրթա 2 - 1:

- Անցեալ շաբթուան ընթացքին Դամասկոս ժամանեցին Պասքէթի Միջազգային Ֆետերասիոնի Ասիոյ գրասենեակի ներկայացուցիչներ՝ Յովսէփ Սէրայտարեան եւ Ռաֆֆի Գասապեան, մօտէն հետեւելու Դամասկոսի պասքէթի մարզադաշտերու պատրաստութեան, նախքան Ասիոյ մրցաշարքերու կայացումը:

ՀԱՅԿԱԿԱՆ

Էսկար Դուկասեան՝ WBA Asia South-ի Ախոյեան

Հայազգի բռնցքամարտիկ Էսկար Դուկասեան WBA Asia South-ի մրցումներուն յաջողեցաւ տիրանալ աշխարհի ախոյեանութեան: Մրցումը տեղի ունեցաւ Ռուսիոյ մայրաքաղաք Մոսկուայի մէջ. 30 տարեկան հայ մարզիկը մրցավարներու միաձայն որոշումին համաձայն պարտութեան մատնեց Թանգանիոյ ներկայացուցիչ Կուլվու Պուշիրին եւ ձեռք ձգեց տիտղոսը:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Օսման Տեմալէ Տասը Շաբաթ Պիտի Բացակայի Խաղէն

Սպանիոյ ախոյեանի՝ Պարսելոնայի ղեկավարութիւնը ակումբի պաշտօնական կայքին մէջ յայտարարութիւն մը տարածեց, յայտնելով, թէ խումբի յարձակողական խաղացող Օսման Տեմալէ տասը շաբաթ պիտի բացա-

կայի խումբի մրցումներէն, վիրաւոր ըլլալուն համար: Տեմալէ այս տարեշրջանին երկրորդ անգամ ըլլալով վիրաւորուեցաւ: Անցեալ Չորեքշաբթի, Երոպայի ախոյեանութեան մրցումներուն, Պարսելոնա Պորիսիա Տորթմոնտ հանդիպումին ընթացքին, Տեմալէ դուրս ելաւ դաշտէն, որովհետեւ աջ ոտքին մկանը ծանրօրէն վնասուեցաւ: Ան արցունքոտ աչքերով հրաժեշտ տուաւ ընկերներուն:



որովհետեւ աջ ոտքին մկանը ծանրօրէն վնասուեցաւ: Ան արցունքոտ աչքերով հրաժեշտ տուաւ ընկերներուն:

Արսենալի Մարզիչը Զեռացուեցաւ Իր Պաշտօնէն

Անգլիոյ մարզիչներու հեռացումներուն ընթացքը շարունակելով, Լոնտոնի Արսենալի ղեկավարութիւնը պաշտօնազուրկ ըրաւ ֆութպոլի սպանացի մարզիչ Ունայ Էմերը: Զինգշաբթի օր խումբը Էմերի գլխաւորութեամբ կատարեց Երոպայի «Չեմփիընզ-լիկ»ի մրցաշարքի իր վերջին մրցումը, 2 - 1 արդիւնքով պարտութիւն կրելով Գերմանիոյ Ինթրախտ ֆրանսֆուրթ խումբին դիմաց: Արսենալը վերջին եօթը մրցումներուն չյաջողեցաւ ոչ մէկ յաղթանակ արձանագրել, որուն համար ակումբի համակիրները մրցումի ընթացքին բարձրաձայն պահանջեցին Էմերի հեռացումը, ինչպէս նաեւ դաշտի պատերուն վրայ գրուիւններ արձանագրեցին՝ իրենց դժգոհանքը արտայայտելով:




ԵՐՈ-2020-Ի ԵՃՐԱՓՈՒԿԻՉ ՄՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒՄԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ

Ռումինիոյ մայրաքաղաք Պուխարեստի մէջ տեղի ունեցաւ ֆութպոլի Երօ-2020-ի եզրափակիչ մրցաշարքի վիճակահանումը: 24 խումբեր բաժնուեցան 6 խմբակներու: 4 ուղեգրերու տերերը յայտնի կը դառնան 2020-ի գարնան տեղի ունենալիչ ՈւեֆԱ-ի Ազգերու Լիկայի փլէյ-օֆֆի արդիւնքին համաձայն:



Եզրափակիչ մրցաշարքը տեղի կ'ունենայ 12 Յունիսէն 12 Յունիս, Սան Պետրոսպուրկի, Ռոմայի, Ամսթրտամի, Լոնտոնի, Զլազըրի, Պաքուի, Պուտափետսի, Միւնխէի, Զոփենհայզի, Թիֆլիսի, Պիլպաուի եւ Պուխարեստի մէջ:

- Վիճակահանումի արդիւնքը հետեւեալն էր.
- A խումբ (Ռոմա - Պաքու)
 - Իտալիա, Չուիցերիա, Թուրքիա, Ռէլզ
 - B խումբ (Սանկտ Փետրոսպուրկ, Զոփենհայզը)
 - Պելճիքա, Ռուսիա, Դանիա, Ֆինլանտա
 - C խումբ (Ամսթրտամ, Պուխարեստ)
 - Ուքրանիա, Յոլանտա, Աւստրիա, Ազգերու Լիկայի փլէյ-օֆֆի D խմբակի յաղթող
 - D խումբ (Լոնտոն, Զլազը)
 - Անգլիա, Խրուաթիա, Չեխիա, Ազգերու Լիկայի փլէյ-օֆֆի C խմբակի յաղթող
 - E խումբ (Պիլպաու, Տուպլին)
 - Սպանիա, Լեհաստան, Շուեդ, Ազգերու Լիկայի փլէյ-օֆֆի B խմբակի յաղթող
 - F խումբ (Միւնխէ, Պուտափետս)
 - Գերմանիա, Ֆրանսա, Փորթուկալ, Ազգերու Լիկայի փլէյ-օֆֆի A խմբակի յաղթող



ՍՕՒ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՐ ԱՄՆՈՐԵԱՅ ՃՈՒՑԱՆԱԴԵՍ ՎԱՃԱՌԸ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեգան Առաջնորդ Գերշ. Տեր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, կազմակերպությամբ ՍՕՒ-ի Շրջանային Վարչութեան, Երեքշաբթի, 3 Դեկտեմբեր 2019-ի առաւօտեան ժամը 11:00-ին, ԱՄՇ Տան «ԼԵՆՈՆ ՇԱՆՔ» սրահէն ներս տեղի ունեցաւ Ամանորեայ ցուցահանդէս վաճառքի բացումը, մասնակցութեամբ ՍՕ Խաչի Ձեռարուեստի, Աշխատանցի եւ «Փեթակ» Խոհանոցի յանձնախումբերուն:

ցնելու կողքին ունի նաեւ հայ կնոջ գործ հայթայթելու նպատակ: Ապա



անդրադարձաւ Արեւմտահայաստանի գաւառներուն մէջ հայկական իւրայատուկ ոճ եւ գարդանկարային բովանդակութիւն ունեցող ասեղնագործութեան գարգացման հոլովոյթին:

Այնուհետեւ տիկին ՍԵԱՆ Ազարիկեան-Պարմաքսզեան ներկայացուց Ուրֆայի եւ Տիգրանակերտի գործերուն իւրայատուկութիւնները, դիտել տալով, որ հայկական ասեղնագործութիւնը հին է այնքան, որքան հայ ժողովուրդին

Բացումը կատարեցին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը եւ ՍՕՒ-ի Շրջ. Վարչութեան ատենապետուհի Սեդա Տեր Աբրահամեան-Կերկերեանը:

րանակերտի գործերուն իւրայատուկութիւնները, դիտել տալով, որ հայկական ասեղնագործութիւնը հին է այնքան, որքան հայ ժողովուրդին



Ներկայ էին նաեւ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչ Հուրի Ապահունի-Պօշկեզէնեան, Պատկան մարմնի ներկայացուցիչ, Հոգշ. Տեր Մանուկ Աբեղայ Պարիխանեան, ՍՕՒ-ի Շրջ. Վարչութեան, Շրջ. յանձնախումբերու եւ մասնաճիւղերու ներկայացուցիչներ:



ՍՕ Խաչի քայլերգի երգեցողութիւն ետք Բացման Խօսքով Հանդէս

պատմութիւնը եւ դարերու ընթացքին անցնելով բազմաթիւ ճանա-



ելաւ ՍՕՒ-ի Շրջ. Վարչութեան ատենապետուհի տիկին Սեդա Տեր Աբրահամեան-Կերկերեան: Ան նկատել տուաւ, որ տարիներու աւանդութիւն դարձած այս ցուցահանդէսը հայկական ասեղնագործութիւնը ծանօթա-

պարհներէ եւ կրելով ազդեցութիւնը ժամանակներու Նորութիւններուն կատարելագործուած ու հասած է

ՍԵԱՆ ԱԶԱՐԻԿԵԱՆ-ՊԱՐՄԱՔՍԶԵԱՆ
Շար. Էջ 11 ➤

ԳՐՈՂ, ՄԱՆԿԱՎԱՐԺ, ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ ԼԵՒՈՆ ՇԱՆՔԻ ՄՆԵԱՆ 150-ԱՄԵԱԿԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ

Հովանավորությամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեգան Առաջնորդ Գերշ.

Խօսքէն ետք ներկայացուցին ձեռնարկին յայտագիրը:



Տեր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, կազմակերպությամբ Համազգայինի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի Վարչութեան, Ուրբաթ, 29 Նոյեմբեր 2019-ի երեկոյեան ժամը 6:00-ին ԱՄՇ Տան «ԼԵՆՈՆ ՇԱՆՔ» սրահին մէջ տեղի ունեցաւ ԼԵՒՈՆ ՇԱՆՔԻ ԾՆՆՆԵԱՆ 150-ամեակի յոբելինական հանդիսութիւնը:

Բացման Խօսքով հանդէս եկաւ վարչութեան ատենապետուհի Ռոզա Ապեճեան, որ անդրադառնալով



ԼԵՒՈՆ ՇԱՆՔԻ գրական եւ մշակութային գործունեութեան կարեւորութեան



Գրական այս հոգեպարար ձեռնարկին ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը, Հոգշ. Տեր Մանուկ Աբեղայ Պարիխանեան, Համազգայինի Սուրբիոյ Շրջ. Վարչութեան անդամները, Հ. Ի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի Վարչութիւնն ու գրասեր հանդիսականներ:



ըսաւ. «Սփիւռքը հունաւորող, մտաւորականութիւնը վերակենդանաց-



Հանդիսութիւնը Կ'ընդգրկէր գեղարուեստան յայտագիր: Հանդիսավարներն էին Զրիստ Գարամանեան եւ ՍԵԱՆ Տէրմսեճեան:

Նոր, հայկական մշակոյթը պահպանող եւ տարածող այս փիլիսոփայ ռահվիրային անձնուէր ջանքերուն եւ

Զրիստ Գարամանեան
Շար. Էջ 11 ➤



ամեն Շաբաթ և Կիրակի օրերը